



БРИК ШИФРЫ РЕПЛИКА

ЫЧКСИ РЫНКЕ

“<sup>бч ню</sup>ОЧДАРЫ”, МАСРЫ







A 1  
16068



ՀՈՊՀ ԳԱ արվեստի  
ինսուլյացիոն

բրոց  
ակադեմիական



ԴՐԱՅԻՏԱՆ, ԱՇՎԵՆՑ  
ԵՎԼԻԿԱՆ

"ԶԱՂԻԿ,"  
ՌԱՍՏՐՈՒՆԸ



ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ • 1980



573 - 80

Խմբագիր՝ Ս. Մ. Հարդենյան  
 Նկարիչ՝ Զ. Յ. Յ. Գասպարյան  
 Գեղ. խմբագիր՝ Զ. Ի. Սարգսյան  
 Տեխ. խմբագիր՝ Յա. Բ. Զախովյան  
 Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Ս. Բարձյան

Ա 4907000000-002 2-80 (Տ)  
 728(02) 80

**ИРМА РУБЕНОВНА САФРАЗБЕКЯН  
 НИКИТА БАЛИЕВ И ЕГО ТЕАТР  
 «ЛЕТУЧАЯ МЫШЬ»  
 (На армянском языке)**

Армянское театральное общество, Ереван, 1980

© Հայկական թատերական ընկերություն, 1980

ՎՖ 06080	Պատվիր 63	տպաքանակ 1000
----------	-----------	---------------

Հանձնված է շարվածքի 15. 01. 1980 թ.: Ստորագրված է տը-  
 պագրության 13. 05. 1980 թ.: Թուղթ տպագ. № 2,  $60 \times 90^1/32$ ,  
 տպատեսակ՝ «Նորք»: Տպագրությունը՝ «Բարձր»: 2,75  
 պայմ. տպ. մամուլ, 2,2 հրատ. մամ + 3 ներդիր:

Դինը՝ 30 կուգ.:

Հայկական թատերական ընկերություն, Երևան-9,  
 Լենինի պող. 48:

Երևանի պետհամալսարանի տպարան, Երևան, Արտվան № 52:

Армянское театральное общество, Ереван-9,  
 пр. Ленина, 48

Типография Ереванского госуниверситета,  
 Ереван, ул. Абовяна, № 52.

## I

«Մուկվայի Գեղարվեստական թատրոնն իր ընձյուղներն է տվել ոչ միայն դրամայի, այլև մի ուրիշ, միանգամայն հակառիր՝ պարողիայի և զավեշտի ասպարեզում»<sup>1</sup>, — գրել է Կ. Ստանիսլավսկին: Հենց ՄԽԱՏ-ի ընդերքում, «կապուստնիկներում» ծնունդ առավ ու կազմակերպվեց «զավեշտի, ծաղրանկարի, սատիրայի, գրոտեսկի»<sup>2</sup> թատրոնը՝ «Չղջիկը»<sup>3</sup>, որ նորույթ էր Ռուսաստանում: Զավեշտի և զվարճանքի հետ կային այնպիսի համարներ, որ նախապատրաստե-

<sup>1</sup> К. С. Станиславский, Моя жизнь в искусстве, Л.-М., 1931, § 626:

<sup>2</sup> Նույն տեղում, § 634:

<sup>3</sup> Մեր ակնարկում հանգամանորեն կանգ կառնենք թատրոնի արտասահմանյան գործունեության վրա, քանի որ նրա ուսուաստանյան գործունեությանը մենագրություն է նվիրված (Ա. Էֆրոս — «Ն. Ֆ. Բալիկի «Չղջիկը»), ինչպես նաև մի շարք հոդվածներ:

ցին նոր ժամանի ծնունդը: Զվարճալի քնույթ ունենալով հանդերձ, այդ համարները միաժամանակ հետամուտ էին քսղաքական ընդհանրացումների, սատիրական ուժով ծաղրում էին պետական կարգը, ժամանակի կենցաղն ու բարքերը: Այստեղ առաջին անգամ երևան եկավ, այսպես ասած, ելույթավարության ժամը, և նախաքեմում հայտնվեց Էստրադայի մի նոր «գործող անձ»— ելույթավարը (կոնֆերանսյե): «Գեղարվեստական թատրոնն էր, որ ոուս Էստրադային տվեց առաջին ելույթավարը. հոչակավոր Նիկիտա Բալինս էր այդ անձնավորությունը»<sup>4</sup>, — գրում է Գ. Շչերբակովան:

Նիկիտա Ֆյոդորովիչ Բալինս (Պալյան) ծընվել է 1887-ին Երզրումում (Կարին), հայ առևտրականի ընտանիքում: Տասներկու տարեկանում հարազատների հետ տեղափոխվում է Նոր Նախիջևան: Նախնական կրթությունը ստանում է հայ ուսուցիչներից, բայց հայերեն վատ է խոսում: Ծուտով Բալինսների ընտանիքը բնակություն է հաստատում Մոսկվայում, և բանի որ հայրը զբաղվում էր առևտրով, տղային, հակա-

<sup>4</sup> Г. А. Шербакова, Концепт и его ведущий, М., 1974, № 10:

ուսկ նրա ցանկության, տալիս է առևտրական ուսումնարան: Մինչդեռ Նիկիտան դեռ վաղ հասակից հետաքրքրվում էր թատրոնով, սրամիոն էր, սիրում էր ընդօրինակել սրան-նրան՝ զվարճացնելով դաշնակերներին: Եվ ահա առևտրական ուսումնարանն ավարտելուց հետո նա հրաժարվում է գրասենյակում աշխատելոց, համոզված, որ իր կոչումը թատրոնն է:

1904-ին, ոուս-ճապոնական պատերազմի ժամանակ, Բալիկին զորակոչում են: Նրանց զինվորական ստորաբաժանումը տանում են Խարբին: Ի սարսափ ատորաբաժանման հրամանատարի, Բալիկին ընկերներին զվարճացնում էր օպերետային արիաներ կատարելով, շրջապատի մարդկանց շարժուձևը նմանակելով և չեր ոգում ենթարկվել զինվորական կարգապահության:

Բարեբախտաբար, պատերազմը շոտով ավարտվեց, և Նիկիտա Բալիկը Մոսկվա վերադարձ Գեղարվեստական թատրոն ընդունվելու հաստատ որոշմամբ. ինչ գործ ոգում են՝ տան, միայն թե լինի աիրած թատրոնում:

1900-ական թվականներին առեղծված հեղափոխական իրադրությունը, ժողովրդի պայքարը հանուն սեփական իրավունքների հաստատման

չէին կարող որոշակի ազդեցություն չունենալ երիտասարդ Բալինի վրա: Ամեն մարդ ձգտում էր իր տեղը գտնել, և Բալինն էլ չեզոք չմնաց. պատահական չէ, որ արդեն կազմավորված դեմոկրատական ավանդույթներով այդ թատրոնն էր գրավում նրան:

1906-ին Նիկիտա Բալինը իր ընկերոջ՝ Ն. Տարասովի հետ, որ արվեստի մեծ սիրահար էր և արտասովոր ընդունակությունների տեր մարդ, գնաց Բեռլին; ուր Մոսկվայի Գեղարվեստական թատրոնը հանդես էր գալու հյուրախաղերով: Այստեղ Բալինը հանդիպեց Վլ. Նեմիրովիչ-Դանչենկոյին և դարձավ նրա քարտուղարը: «Այդ ժամանակ նա դեռ լրիվ բացված չէր, նոր-նոր միայն «Ընկերություն» էր հավաքում», քննում, մշակում էր իր սրամտություննը»<sup>1</sup>, — գրում է Նեմիրովիչ-Դանչենկոն երիտասարդ Բալինի մասին:

Նիկիտա Բալինը չէր հրաժարվել Գեղարվեստական թատրոնի դերասան դառնալու իր մտադրությունից: Վերջապես նա Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կատակերգության ներկայացման մեջ դեր ստացավ, որ ընդամենը մի ունա-

<sup>1</sup> Вл. Немирович-Данченко, Из прошлого, М., 1933:

լիկ ուներ: 167 փորձից հետո ռեպլիկը հանեցին, և հիմա նա արեն պիտի պարզապես բեմ ելներ ու դուրս գար անխոս: Բայց երբ նրա համար զգեստ կարեցին և հագալ՝ այնպիսի գրտտեսկային տեսք ստացավ, որ հասկացան իսկույն՝ անպայման կշեղեր հանդիսատեսի ուշադրությունը: Եվ որոշեցին, որ նա այդ ներկայացման մեջ հանդես չպիտի գա: Բայց և այնպէս, Բալինին հաջողվեց մի քանի փոքր դեր խաղալ — Հաց՝ Մետերլինկի «Կապույտ թոշունում», Հյուր՝ Լ. Անդրեևի «Մարդու կյանքը» ներկայացման մեջ:

Սակայն Բալինի համբերության բաժակը լրցվեց, երբ նրան հանձնարարեցին Թեոդորի կուզենի դերը Համսունի «Կյանքի մագիլները» պիեսում: Ըստ Էության, դա անխոս դեր էր, քանի որ կուզենը շատախոս է այնքան, որ շրջապատռները թույլ չեն տալիս նույնիսկ քերանը բացի:

Մինչդեռ Բալինը համառորեն սեփական անկրկնելի «ես»-ը, իր անհատականությունն արտահայտելու հնարավորություն էր պնտրում: Եվ այդպիսի հնարավորություն ստեղծվեց: Գեղարվեստական թատրոնի դերասանները հաճախ պրեմիերաներից ու սովորական ներկայացումներից հետո հավաքվում էին «կապուստնիկի» —

հանգստանում էին, զվարճանում և քննարկում  
խաղացված Աերկայացումը։ Այդ երեկույթների  
հոգին ու դեկապարն էին Ն. Բալինն ու Ն. Տա-  
րասովը՝ մի շաբթ զավեշտների և պարողիանե-  
րի հեղինակ, որ միջոցներ հատկացրեց «Զղջիկ»  
թատրոնը հիմնելու համար։

«Կապուտնիկները» սկզբում կազմակերպ-  
վում էին Պերցովի տաճ Աերքնահարկում։ Հախա-  
ձեռնողը սրամիտ ու հնարագետ Բալինն էր, և  
հենց այդ երեկույթներից Էլ սկզբնավորվեց  
«Զղջիկ» թատրոնը, որ նախապես ծրագրված էր  
իբրև ինտիմ խմբակ «արվեստի 40—50 աշխա-  
տողի համար», ուր, ինչպես ինքը՝ Բալինն էր  
ասում, դերասանները կարող են ազատություն  
տալ փրենց ստեղծագործական երևակայության  
ու սրամտությանը։ Երեկույթների ծրագիրը կոչ-  
վում էր՝ «Արտիստները սեփական տանը», և  
դրանով ասված էր ամեն ինչ։

Բալինին ու Տարասովին հաջողվեց խմբի մեջ  
Շերգրավել տաղանդավոր մարդկանց, Մուկվայի  
և շահավոր դերասաններին, և հանդիսատեսնե-  
րը նույնպես հայտնի արվեստագետներ էին ու  
գրողներ։ Այսպես, երեկույթներից մեկի ժամա-  
նակ հանդիսատեսների միջից «կորզված» Սեր-

գել Երախմանինովը դաշնամպրով կատարում է «Ետալական պողկան», գրող Լեռնիդ Անդրեևը շենքոր է ճպագում, իսկ Եվգենի Վախթանգովը նշանակում է Կաչալովին»<sup>1</sup>:

Սակայն «կապուտնիկների» ոճը չեր բավարարում Բալինին, նա ձգտում էր ստեղծել ինչ-որ նոր բան, ստեղծել մի թատրոն, որ տարբեր լիներ այն ժամանակ գոյություն ունեցող կոմեդիա-ի ու զավեշտի մյուս բոլոր թատրոններից («Կրիպուկ գերկալո», «Բալագանչիկ», «Վոլնայա կոմեդիա» և այլն):

Ինչպես գրել է Իգոր Խլինսկին, «նա ստեղծեց իր թատրոնը», գեղարվեստական մանրապատումների՝ Ռուսաստանում առաջին թատրոնը: Միանգամայն իրավացի է Վլ. Շվեյցերը, երբ ասում է, թե «Բալինի թատրոնը ճեմկեց մեր ամենալորջ թատրոնի ուրախ «կապուտնիկում»<sup>2</sup>:

«Զոջիկ» թատրոնը բացվեց 1908 թվականի մայորի 29-ին: Թատրոն-կարարեի բացման մասին Բալինը գրեց դերասան Ն. Պոդգորնուն. «Աս Գեղարվեստական թատրոնի յուրատեսակ

<sup>1</sup> Г. А. Алексеев, Серьезное и смешное, М., 1967.  
Էջ 4:

<sup>2</sup> «Москва» Հանդես, 1968, № 6, էջ 186:

ակումբն է լինելու՝ անմատչելի ուրիշների համար, ուր ծաղկելու են պարողիան, շարժը, ուր անկեղծ ծիծաղ է հնչելու, ուր դերասանները դադարելու են սույն դերասաններ լինելուց»<sup>1</sup>:

Եվ քանի որ ներկայացումներն սկսվում էին ուշ գիշերը, ներքնահարկում, թատրոնն էլ ըստ այդմ կոչեցին «Չղջիկ»:

Սուածին երեկոն բացեց Ա. Յուժինը: Ներկա էին երգիշներ ու դերասաններ՝ Շալյափինը, Սորինովը, Մուկվինը, Ստանիլավսկին, Կաչալովը, Լուժմակին... Ստանիլավսկին պատկերեց ձեռնածուի, պարթևահասակ Շալյափինը, արևելյան զգեստով, գորգի վրա ըմբշամարտեց փոքրամարմին ու ժիր Մոլերժիցկու հետ, Մուկվինը ճանակեց բալագանի սպասավորի:

Թատրոնի հոգին՝ զվարթ ու հնարագետ, աշխույժ ու սրամիտ Բալինը ձգտում էր, որ մարդկանց վաստ տրամադրությունը «վերարկուների և կրկնակոչիկների հետ մնա հանդերձարանում»:

Բալինը կարողանում էր ոչ միայն գտնել ըստեղծագործական խանդով ու ավլունով լի երիտասարդ տաղանդների, այլև առաջ բաշել ու

<sup>1</sup> ՑԳԱՀԻ, Խ. Ա. Պողոսոսու արխիվ:

ճանապարհ տալ ճրանց: Թատրոն եկան Վ. Խենիկինը, Կ. Գիբշմանը, Ռ. Զելյոնայան, Բ. Բորիսովը, առաջին անգամ այստեղ հնչեց Վ. Բարսովայի ձայնը, երգչունի, որ իր գործունեությունն սկսեց այս թատրոնում Վակիսի «Սերենադով»:

Ծուտով հասարակության բուռն ներհոսք սկսվեց թատրոն. գալիս էին տեսնելու, թե ինչպես են իրենց ազատ ժամանակն անցկացնում ու զվարճանում սիրված հանրահայտ դերասանները: Մոսկվայում Բալիսի սրախտությունները «քերնեքերան էին անցնում», հարուտները պարաստ էին մեծ գումարներ դնել, միայն թե գեթ մի երեկո «ընկնեին» «Չղջիկի» ներքնահարկը: Եվ թատրոնն ստիպված էր հրաժարվել իր ինտիմ բնույթից. «Չղջիկը» դուրս եկավ բաց թատրոնի ոոլի՝ արդեն ապահոված երկրպագուների վիթխարի մի քանչակ:

Միլյուկովսկի ճրանցքի նոր, ավելի ընդարձակ սրահում կարելի էր տեղավորել մինչև հարցուր մարդ, բեմի դիմաց դրված էին փոքր սեղաններ, հնչում էր արևելյան երաժշտություն, մա-

առուցվում էին հայկական կերակրատեսակներ և  
արևելյան քաղցրավենիք<sup>1</sup>:

1910 թ. փետրվարի 9-ին տեղի ունեցավ վճա-  
րովի առաջին Աերկայացումը ի նպաստ կարի-  
քավոր դերասանների: Վճարովի Աերկայացում-  
ների կազմակերպումը հնարավորություն ընձե-  
նեց կանոնավորելու բեմադրական գործը:

1910 թ. մարտին Աերկայացվեց Ժ. Օֆենբա-  
խի «Գեղեցկունի Հեղինե» նշանավոր օպերետի  
կատակալին պարողիան: Դիրիժորը Վ. Նեմի-  
րովիչ-Շանչենկոն էր, Հեղինեի դերերը կատա-  
րում էր Օ. Կնիպպեր-Չեխովան, Մենելայոսինը՝  
Վ. Կաչալովը, Պարիսինը՝ Ի. Մուկվինը: Նույն  
երեկոյին Ս. Ռախմանինովը, որպես դիրիժոր,  
դեկապարում էր «Ապաշների պարը», որ կազա-  
րեցին Ա. Կոռնենը և Ռ. Բոլելավսկին:

Թատրոնի խաղացանկում տեղ էին գտել թա-

<sup>1</sup> Ա. Բախորուշինի անվան թատերական թանգարանում  
պահպանվել է Օ. Պրավդինի հրավիրատումաը 1910 թ. Հուն-  
վարի 20-ի երեկոյի համար, գրված հայերեն ու ֆրանսերեն.  
«Մկրտիչ Բալյանը խոնարհարար խնդրում է Զեղ սույն  
1910 թ. Հունվարի 20-ին, գիշերվա 12 ժամին շնորհ բերել  
«Լետցայ Մայա» կաբարե ընթրիքի, որ պիտի լինի նրա  
անվանակոչության առթիվ»:

տերական պարողիաներ, գեղարվեստական մի-  
նիալյուրներ, դիվերտիվնենուներ, երգ, պար,  
արտասանություն — մի խաղացանկ, որ աստի-  
ճանաբար բնորոշ դարձավ «Չղջիկի» համար և  
ներազայում հոչակեց թատրոնն աշխարհով մեկ:

Դերասանները չունեին հասուկ ամպուա,  
չկար ժանրային տարբերակում, յուրաքանչյուրին  
ներկայացվում էր մի պահանջ՝ լինել ճկուն ու  
բազմակողմանի կատարող:

Քանի որ մերկայացուները այլատարը բը-  
նուց ունեին և սյուժեատային միասնական շարժ-  
ման համար ընդհանուր առանցքի հարկ էին  
գտնմ, այդ առանցքը դարձավ Նիկիտա Բալինը:  
Նա ծիծառի ու զվարճության կուտակիչն էր:  
Ելույթներ վարելու նրա նյութն ու եղանակը, ինչ-  
պես գրել է Ի. Խլինսկին, երբեք նախապես պատ-  
րաստված ու սերտովի չէին, այլ միշտ՝ հան-  
պատրաստից: Եվ հենց այս ժանրում նա «գտավ  
իր տարերքը և այստեղ դարձավ անփոխարի-  
նելի»<sup>1</sup>, — հիշում է Լ. Լեռնիդովը:

Թատրոնը համեստ կյանք էր վարում, առանց

<sup>1</sup> Л. Леонидов, Воспоминания, статьи, беседы, пе-  
реписка, записные книжки, М., 1960, № 129:

ունկամի ու հայտարարությունների, բայց քանի  
որ երեկոնքն անցնում էին հանդիսատեսի հետ  
սերտ հաղորդակցության պայմաններում, ազ-  
դագրերում ճշում էին՝ «Ելույթավար— Ն. Ֆ.  
Բալին և հասարակություն», և դա բավական էր,  
որ դահլիճը միշտ լեցուն լիներ:

Բալինի արտակարգ ձիրքը և արտիստական  
որույն վարպետությունը բարձր է գնահատել Կ.  
Ստանիսլավսկին. «Նրա անսպառ հումորը, հնա-  
րագիտությունը, սրամությունը՝ թե բուն էո-  
րիան մեջ և թե զավեշտների մատուցման բեմա-  
կան ձևում, հաճախ հանդգետության հասնող նրա  
հնամարձակությունը, լսարանը ձեռքում պահելու  
նրա հմտությունը, չափի զգացումը, հանդուգնի  
և զվարճալիի, վիրավորականի և կատակայինի:  
Ասիմանագծի վրա հավասարակշռություն պահե-  
լու նրա ունակությունը, ժամանակին կանգ առ-  
նելու և զավեշտին բոլորովին այլ, բարեհոգի-  
ուողություն տալու կարողությունը,— այս ամենը  
արտիստական հետաքրքիր դեմք էր դարձնում  
նրան մեզ մոտ նորահայտ ժանրում»<sup>1</sup>:

Բալինն անմկան ու հմտորեն ջնջում էր բեմի

<sup>1</sup> К. С. Станиславский, Собр. соч., т. I, § 364:

ու հանդիսատեսի միջև եղած սահմանը, «կայծակեալին արագությամբ ետ էր մղում հարվածը՝ սովորականի պես իրեն թողնելով վերջին խոսքը»<sup>1</sup>, որ ամենասրամիտ ու հնարագետ մարդկանց մեջ խոսքի մենամարտում հաղթանակ տանելու կարևոր պայմաններից է:

Բալիկը համերգը վարում էր շատ հետաքրքրիր, փոքր-ինչ գիրավուն, բարեդեմ այդ մարդը բես էր ելնում դանդաղ, անշտապ, ուշադիր զըննում էր դահլիճը՝ մինչև վերջին հանդիսատեսը: Նրա սրախոտությունները մշտապես շահում էին հասարակության համակրանքը՝ իսկույն փոխադարձ կապ ստեղծելով, թեև միաժամանակ կըրքուտ վիճում էր նույն հասարակության հետ, և «Նրա ռեպրիկներին պատասխանելը վտանգավոր էր»<sup>2</sup>:

Պատմում են, թե մի անգամ դահլիճում մեկը ճշում է՝ «Հրդեհ»: Բնականարար, հասարակությունն իրար է խառնվում, խուճապ է սկսվում: Եվ հենց այդ ժամանակ բեմ է ելնում Բալիկը: «Հրդեհ»: Ի՞նչ հրդեհ,— որախ բացականչում է

<sup>1</sup> А. М. Арго, Своими глазами, М., 1965:

<sup>2</sup> «Театр» Հանդես, 1968, № 12,էջ 65:

Աս: — Մի՞թե կարող է թատրոնը վառվել, եթք  
այսպիսի մուտք է ապահովված»: Մարդիկ ծի-  
ծաղում են ու հանդարտվում:

Բաղիսի հաջողությունների համար առանձ-  
նապես ուրախանում էր Ստանիլավսկին, որ  
բարձր էր գնահատում նրա տաղանդը և սրտանց  
աջակցում նրան ստեղծագործական որոնումնե-  
րում: Բաղիսն էլ, իր հերթին, որ հղացումների  
ու լուծումների առիթով ամենից առաջ խորհր-  
դակցում էր Ստանիլավսկու հետ: 1910 թվա-  
կանի հոկտեմբերի 15-ին Ստանիլավսկուն հը-  
ղած նամակում նա պատմում է, թե ինչպես է  
հասարակությունն ընդունել առաջին ներկայա-  
ցումներից մեկը. սկզբում հանդիսատեսը լսում  
էր «ակնածանքով, բայց դեռ խանդավառություն  
չէր ցուցաբերում», դեռ իր վճիռը չէր կայաց-  
նում, գուսապ ու ուշադիր հետևում էր քեմում կա-  
տարվող յուրաքանչյուր շարժմանը: Սակայն «հա-  
ջողությունը մեծանում էր րոպե առ րոպե, և վեր-  
չուն հիացումի աղմուկն էր բռնել ամբողջ դահ-  
լիճը, մի տեսակ հեքիաթալին եր... չորս րոպե




1912

J. C. Smith M.D.



1912



անընդհատ ծափահարություն... Կատարյալ հաղթանակ...»<sup>1</sup>:

Գոյության առաջին խև օրերից այն ամենը, ինչ հնչել է «Չղջիկի» բեմից՝ մեկ գործողությամբ պիեսներ, պարոդիաներ, հումորեսկներ, ամբողջովին ուղղված է եղել բուրժուական թատրոնի քարացածության, հնամոլության դեմ, պայքարել է հանուն բեմական պարզության և ռեալիզմի: Ու թեև «Չղջիկը» թատրոն-կաթարել էր, այնուհետեւ օրգանապես նրան խորթ էին գումարությունն ու պունդրաֆիան, անհոգ զվարճանքը քարձրանում էր ճշմարիտ արվեստի աստիճանի, որ իր կնիքը դրեց թատրոնի ամբողջ պատմության վրա և ավանդույթ ստեղծեց:

Համերգներից մեկի պահպանված ծրագրով (1912 թ. հունվարի 27) կարելի է դատել, թե որքան բազմազան ու հետաքրքիր է եղել թատրոնի խաղացանկը: Այդ համերօնց ստացված հասույթը հատկացվել է ուսանողական տուն գնելու ֆոնդին: Կատարվել են Չայկովսկու Սերենադն ու Լյադովի Բարկարոլան, ընթերցվել են Նադյոնի բանաստեղծություններն ու Տորգենինի

<sup>1</sup> ՄհԱՏ-ի արխիվ, Ստանիսլավսկու գրքեալինդ:

արձակ բանատեղությունները, ներկայացվել են «Ալիքահատություն» երաժշտական պատկերը Չեխովի պատմվածքի մոտիվներով, Նեժդանովան կատարել է Լակմեի արիան համանուն օվերայից:

Թատրոնի խաղացանկն ավելի ու ավելի երբ հարատանում, և ավելի ու ավելի հետաքրքիր երդառնում թատրոնն ինքը: Ստանիսլավսկու խորով ասած, թատրոնը «տարբեր պայմանների հետևանքով ստիպված էր փոխել իր նախկին ուղղությունը դեպի գեղեցիկ, հաճախ՝ ճշմարիտ գեղարվեստական պատկերներն ու տեսարանները, որ ուղեկցվում էին երգերով, պարերով ու սրտասանությամբ»<sup>1</sup>: Այլ կերպ ասած, խոսքի արվեստին ավելացել էր շարժման և պլաստիկայի արվեստը:

Հարուստ խաղացանկը հնարավորություն երբ ընձեռում ներկայացում տալ ամեն օր:

1912-ի գարնանը Բոլշոյ Գննգդնիկովսկի նըրբանցքի կամերային հատուկ արահում բացվեց «Զոջիկ» մանրապատումների թատրոնը՝ ամեն-

<sup>1</sup> К. С. Станиславский, Моя жизнь в искусстве  
էջ 634:

օրիա ընդարձակ ծրագրով։ Սեղանները չքացան, սյառունները դրվեցին շարքով և համարակալվեցին։ Դա մինչխայտուրների մինչհեղափոխական առաջին լավագույն թատրոնն էր, «...որն իր աներկրապելի ազդեցությունն ունեցավ շատ ու շատ էտրադաների և պարային կոլեկտիվների վրա»<sup>1</sup>, —ինչպես գրել է Վ. Դալմիխն։

Բալիսի խմբի մեջ ընդգրկվեցին տաղանդավոր դերասաններ, երգիչներ ու պարողներ՝ Յա. Ցուժնին, Բ. Բորիսովը, Վ. Խեմիկինը, Տ. Դեկարիսանովան, Ե. Տումանովան, Տ. Օգանեզովան, Ն. Պոդգոռնին, Բուրջալով եղբայրները՝ Թատրոնում ելույթ էին ունենում այնպիսի նշանավոր դերասաններ, ինչպիսիք են Վ. Կաչալովը, Ի. Մուկովինը, Լ. Սովորժյակին, Օ. Կերպակեր-Չեխովիան, Ա. Կոռնենը։

Հաճախ թատրոնում հոբելյաններ էին նըշվուն, կազմակերպվում էին հանդիսավոր ներկայացումներ ականավոր գրողների, դերասանների պատվին։ Այդ կարգի ներկայացումներ են նվիրվել, օրինակ, Հ. Ուելսին, Է. Վերհարնին, Պ. Ֆորին, Գ. Կրեգին։

<sup>1</sup> «Театральная жизнь» Հանդես, 1969, № 13, էջ 3:

Մուկվա այցելած նշանավոր արտիստներից շատերը ոչ միայն սիրով հաճախում էին այս թատրոնը, այլև քեմ էին ելնում և ելույթ ունենում. հիշենք, օրինակ, Վիեննացի հանրաճանաչ օպերետային դերասան Շպիլմանին, որ երգեց ալստեղ: Մի որիշ անգամ Բալինը հանդիսարահից քեմ հրավիրեց հունգարացի դիրիժոր ու կամպոգիտոր Արթուր Նիկիշին, և վերջինիս դեկամարդությամբ նվագախումբը կատարեց Շորանի վալսը, ընդ որում նրան, դիրիժորական փայտիկի փոխարեն, մատուցին երկարակոթ մի վարդ:

Բազինի թատրոնում ելույթ է ունեցել նշանավոր դերասանուհի Ալիսա Կոռնենը: Նա գրել է, յեն «Չղջիկ» թատրոնի ներկայացմանը մասնակցելն իր համար ուրախալի իրադարձություն է եղել<sup>1</sup>: Նա հանդես է եկել Գեորգի Ալանովի հետ և մշտապես ջերմ ընդունելության է արժանացել:

Թատերախմբում առանձնապես աչքի եր ընկնուն տաղանդավոր դերասան, հիանալի կատակերգու և խմբովիզացիայի արտակարգ վար-

<sup>1</sup> «Տեատր» Հանդես, 1966, № 7, էջ 103:

պետք Բ. Բորիսովը: Նրա ողջ կեցվածքը, շարժուձևը, ամենապարզ ու հասարակ պատմությունը հանդիսատեսին հումորով, նորբերդներով մատուցելու եղանակը ունկնդիրների հիացանութեան վր շարժում:

«Չղջիկի» խաղացանկը բազմագան էր, այս սեր միահյուսվում էին արվեստի բոլոր տեսակները՝ երգ, պար, երաժշտություն, գեղարվեստական խոսք, նկարչություն, պատմվածքների բեմականացումներ: Կարելի էր տեսնել, թե ինչպես հնամենի ժամացուցի վրա կենդանանում էին սկրյան երկու արձանիկներ և ծեքծեքելով ծիսապար կատարում: Կամ հանկարծ սկսում էին խռով արձանիկները, կենդանանում էին նկարները, քայլանում էին մարդկանց խմբերը, տիկնիկները մարդ էին դառնում, մարդիկ՝ տիկնիկներ, անսկանուց խաղալիքներ կամ թղթե լարախաղաներ...

Բալիկի թատրոնի համար բնորոշ էր տեմպը՝ ինչպես հանդիսատեսին համարները մատուցելու, ակնթարթային վերամարմնավորման, տեսարանների ու դեկորների փոփոխման ձևով, այնպես էլ բուն համարների բովանդակության մեջ, և սա վկացությունն էր այն բանի, որ Բալիկը կա-

բողանում էր քայլել ժամանակին համընթաց, ես  
չվնալ կյանքից, որն արվեստագետին օր-օրի  
առաջադրում էր նոր պրոբլեմներ ու պահանջ-  
ներ: Թատերախումբը և, ամենից առաջ, ինքը՝  
Էալինը, միշտ շարժման, որոնումների մեջ էին  
և անհապաղ արձագանքում էին այդ տարիների  
թատերական կյանքի իրադարձություններին:

Բայինն անողոք ծաղրում էր բոլոր նրանց,  
ովքեր ամեն գնով ճգտում էին դեպի քարձր հա-  
սարակություն, աշխատում էին արհեստական  
շոք, աշխարհիկ վարքագիծ ու շարժուձն ձեռք  
բերել: Այս հիմքի վրա ստեղծվեց «Կատենկա»  
երաժշտական համարը, որ երկար ժամանակ  
մնաց «Չղչիկի» խաղացանկում և շրջեց աշխար-  
հի կեսը: Դա 80-ական թվականների մի հին,  
մոռացված պոլկա էր: Բեմ էին ելնում երեք լա-  
րովի տիկնիկներ (վաճառական հայրը, մայրն ու  
դուստրը՝ Կատենկան), վառ նկարեն զգեստնե-  
րով: Կատենկան, որ ուսանել է պահաժոնում,  
պարում է ժամանակի ամենամոդայական պարե-  
րը, իսկ հայրն ու մայրը ճգտում են ընդգծել նրա  
կրթվածությունն ու նրբագեղ շարժուձնը: Տիկ-  
նիկները խիստ զվարճալի էին և միաժամանակ

սուր ծաղրում Էին քաղքենական կենցաղն ու  
ճաշակը:

Բալիկն անխնա դատապարտում էր արվեստի  
որոշ մարդկանց ստորաքարշությունն իշխանա-  
վորների սուազ: Այս կապակցությամբ պատրաս-  
տել էին մի այսպիսի համար. բեմ էր բերվում  
բոլորովին նոր տաքատ՝ հետևյալ ծանուցումով—  
«Տաքատ՝ մինչև ծնրադրությունը»: Իսկ քիչ անց  
քևում ցուցադրվում էր ծնկներին կարկատան-  
ներ արած տաքատ. «Սա Էլ՝ ծնրադրությունից  
հետո»:

Բալիկի քննադատությունը չէր սահմանա-  
փակվում առկ քաղքենության և ստորաքարշու-  
թյան ծաղրով, եթա սատիրան հասնում էր մին-  
չև կարիքերիզմի և բյուրոկրատիզմի դատապարտ-  
նան: «Չղջիկի» այդ կարգի ներկայացումներից  
մեկը հիշում է Աստանիսլավսկին «Իմ կյանքն ար-  
վեստում» գրքում: Բեմում դրված է բուտաֆո-  
րական հսկա մի հեռախոս, որ անընդհատ  
զանգում է: Նիկիտա Բալիկը պատասխանում է՝  
սրամտություններ շաղ տալով: Երեկոն համընկ-  
նում էր Պետական դումայի ընտրություններին,  
Մոսկվայում անհամբեր նորությունների Էին սպա-  
սում: Հեռախոսը նորից է հնչում, և Բալիկի ուսպ-

լիկներից հասկացվում է, որ գանգում են Պետերբուրգից: Եվ ահա մեկեն փոխվում է Բաղիսի ողջ կեցվածքը, մարմինը կորանում է, կորանում, գոյարվում հեռախոսի առաջ: Բայց համեմարծ նաև սկսում է շտկվել, ժխտողական պատասխանները տալ, դառնալ ավելի ու ավելի վճռական և, վերջապես, «ո՞չ, ո՞չ» ասելով կտրուկ ընդհատում է խոսակցությունը: Եվ միայն բեմից հեռանալիս, իբր ի միջի ալլոց, ուեպիկ է նետում հասարակության կողմը՝ տալով քաղաքական գործիչներից մեկի անունը, որ մախագահի պաշտոնի է հասել. «Հարցնում է՝ մեր «կապուստնիկը» դեկավարելու համար մախագահ պետք չէ»<sup>1</sup>:

1914-ի օգոստոսին, համաշխարհային առաջին պատերազմի կապակցությամբ, Բաղիսը դիմում է թատերախմբի արտիստներին՝ վիրավոր գիւղորներին օգնելու կոչով. թատրոնը հասույթի երկու տոկոսը հատկացնում է նրանց, իսկ նետոնիվանդանոց է հիմնվում «Զդշիկ» անունով:

Ուրախ Շերքնահարկն արդեռ փոխել էր իր հայսկին տեսքն ու մեկարագիրը: Շուրջը, պատե-

<sup>1</sup> К. С. Станиславский, Моя жизнь в искусстве, § 633:

րին Վիլհելմի, Ֆրանց-Իոսիֆի ծաղրանկարներն էին: Այդ ծանր օրերին Բալինն ու իր խումբն աշխատում էին բարձրացնել մարդկանց տրամադրությունը, հավատ ներշնչել ժողովրդի հաղթանակի հանդեպ:

Թատրոնի հրատապ քենադրություններից մեկը կոչվում էր «Վիլհելմի և Ֆրանց-Իոսիֆի դուետը»: Ֆրանցի դերը կատարում էր Բորիսովը: Նա պատմում էր, որ երազում տեսել է, թե ինչպես «ոռոսական սահմանն ավելի ու ավելի է մոտենում իրեն»: Իսկ մի ուրիշ՝ «Կվինստիլիան արքայի և ըմբռատ Ալբերտի մասին» քենադրության մեջ ոռոսական «լուբոկի» ոճով պատկերված էին Վիլհելմը, Ֆրանց-Իոսիֆը և նրանց դաշնակիցները: Տեսարանն ավարտվում էր այն բանով, որ քոթակում ու վոնդրում էին Վիլհելմին:

Հանդես գալով ի պաշտպանություն Գերմանիայի դեմ Ռուսաստանի հաղթանակի, Բալինը, մոռավորականության որոշ մասի նման, չեր խոհանում իմացերիալիստական ավազակային քաղաքանության և պատերազմի խևական նըստարակների նրբությունների մեջ: Որպես մարդ և արվեստագետ, Բալինն անկեղծորեն ցանկանում էր օգնել ժողովրդին, թերթացնել նրա վի-

ճակը: Համես օպարով հումանիզմի դիրքերից, ևա մարդկանց նվիրաբերում էր իր լուսավոր ու բերկրավի արվեստը:

Հենց այդ տարիներին ևա դիմում է S. Շչեպինա-Կուպերնիկին՝ հոչակավոր դերասանի թոռառութուն, որ թարգմանիչ էր և հատուկ Բալիկի թատրոնի համար գրված բանաստեղծությունների ու երգերի հեղինակ: Բալիկը երան խնդրում է Անրկայսցման նախարան գրել, որը հանդիսանեալ պետք է կշտամբեր թատրոնի տնօրենին, իբր՝ «ժողովրդական աղետի այս ժամանակներում մենք գլուխ չունենք ոչ «Զղջիկի» և ոչ Էլ Նիա ուսանավորների հետ»<sup>1</sup>: Բայց ահա մարդիկ գալիս էին Անրկայսցման, սրտանց ծիծաղում չբարցնելով իրենց զգացումները: Եվ, հիրավի, նույնիսկ այդ տարիներին Բալիկի թատրոնը մեծ սուտք էր տաղիս, մարդիկ գալիս էին հանգատաձայու, երածշտություն և Վիկտոր Խենկինի հիանալի կատարմամբ Բերանմենի «ժողովրդական երգերը» լսելու, որոնց մեջ Փրանչիացի մեծ բանաստեղծը կծու ծաղրում է միապետական իշ-

<sup>1</sup> Ա. Բախրուշինի անվան թանգարան, Տ. Լ. Շշեպկինա-Կուպերնիկի արխիվ:

խանությունը, սևապարծ պալատականներին և  
տգես հոգեւրականությանը: Իսկ Բորիսովը կար-  
դում էր Տուրգենևի «Ինչ լավն էին, ինչ թարմ  
էին վարդերը» արձակ բանատեղծությունը՝  
կանգնած ձյունածածկ պատուհանի մոտ...

1915 թվականի հունվարին Բալիկը Տառյա-  
նա Լվովացին խնդրում է բեղժիւկան զինվոր-  
ութիւնի երգ գրել՝ «Երեք կրակու-ուազմատենչ  
մարտիկների երգն այն մասին, թե ինչպես Բել-  
գիայի զավակները երդվում են վրեժ առնել Գեր-  
մանիաց» պատերազմ հրահրելու համար: Ար-  
տաքրուստ անմեղ, պարզապես զվարճալի թվա-  
յող տեսարանը սուր ու դիպուկ ծաղրանմանա-  
կում էր ուազմական զորահանդեսները՝ քաղա-  
քական սատիրայի ուժ ձեռք բերելով:

1916 թվականի հոյեմբերին Բալիկը որոշում  
է իրագործել նոր ու բավական ինքնատիպ մի  
հղացում՝ բեմում շնչավորել ճենապակե արձա-  
նիկներ— սկրյան, ճապոնական, հոլանդական,  
չինական, ռուսական: «Մենք ուզում ենք կենդա-  
նություն առաջ այդ ճենապակուն և յուրաքանչյուր  
պատկերում մերմուծել Երկու-Երեք մարդու երկ-  
խոսություն կամ գրուց... Բոլոր երկխոսություն-  
ները՝ դարաշրջանի, ժամանակի և տվյալ ճենա-

պակու ազգային ոգով»<sup>1</sup>, — հղացումն այսպես է բացատրել Բալիկը Տառյանա Լվովային գրած համակում:

Բեմում դրվում էր «չինական սկուտեղ», որի վրա, երաժշտության ուղեկցությամբ, անսպասելիորեն հայտնվում էին չինական ազգային զաւատներով մարդիկ: Նրանք երգում էին, պարում և հանկարծ քարանում էին այն կեցվածքով, ինչպես հայտնվել էին քեմում: Կամ, ահա, Գրիգի երաժշտության տակ շնչավորվում էր Կոպենի հագենի ճենապակին, հայտնվում էին մարդկանց փոքրիկ ֆիգուրներ: Տարբեր ժողովուրդների ճենապակին ցուցադրող այս կենդանի պատկերները հաստատում տեղ գտան «Չղջիկի» խաղացանկում և հետո, Եվրոպայում ու Ամերիկայում թատրոնի հյուրախաղների ժամանակ մեծ ընդունելության արժանացան:

Անսովորը, արտակարգն էր քեռոշ Բալիկի թատրոնին: Օժտված լինելով «Գեղարվեստական թատրոնի» համեստ պարզությամբ և նրագույն ճաշակով»<sup>2</sup>, նա ստեղծեց «լիրիկայի, հումորի,

<sup>1</sup> Ա. Բախրուշինի անվան թանգարան, Տ. Լ. Շլեպկինակույշերնիկի արխիվ:

<sup>2</sup> «Տեատր» հանդես, 1958, № 5, էջ 136:

ճեւապակյա արձանիկների և շնչավորված գործելենների» թատրոն<sup>1</sup>:

«Զղջիկին» աշխատակցում էին նշանավոր դերասաններ, երգիչներ, ռեժիսորներ: Եվգ. Վահարանիգովի նորատեսրում կա այսպիսի մի գրառում (1911 թ.): «Բալինն ինձ պատվիրեց մի քանի քենադրել «Զղջիկ» կարարելի համար»: Խոսքը «Անագե զինվորիկներ» երաժշտական մինիատյուրի մասին է, որ քենադրեց Վահարանիգովը, և որը երկար տարիներ, մինչև «Զղջիկ» փակվելը, մնաց թանդրոնի խաղացանկում:

Բալինին մեծ աջակցություն էին ցույց տալիս գրողները: Սովորաբար նաև այնպես էր կարողանում համոզել, այնպես պարզ ու անմիջական խնդրել, որ նրան գրելթե չէին մերժում ևովհիսկ անլանի գրողները: Գրականության և արվեստի պետական կենտրոնական արխիվում պահպանվում է Նրա նամակը՝ ուղղված Լեոնիդ Անդրեևին: «Շատ ենք խնդրում Ձեզ՝ նրա (թատրոնին. Ս.) բացման առիթով մեզ կատակերգական ժամանքի մի բան ուղարկել: Երախոնապարտ Կլի-

<sup>1</sup> А. М. Аро, Своими глазами.

նեինք, ելթն օժանդակեիք մեր կաբարեի բարգավաճմանը»<sup>1</sup>:

Հնապած «Զղջիկի» խաղացանկի մեծ հաջողությանը, Բաղիկը դասական գրականության երկեր քեմականացնելու անհաղթահարելի մղում էր զգում, և այդ գայթակղությունը հաղթող դուրս եկավ: Առաջին փորձը Պուշկինի «Կոմս Նովինն» էր: Բ. Սադովսկին պոեմը վերածեց կոմիկական օպերայի՝ դրամատիկ դերասանների համար, հրաժշտությունը գրեց Ալ. Արխանգելսկին: Ստացվեց վառ ու հետաքրքիր ներկայացում: Սակայն հանդիսատեան այն ընդունեց փոքր-ինչ սթափ հայացքով. «Զղջիկի» քեմի համար նման գործը նոր Էր ու անսպասելի, ժամանակ էր պետք, որ հասարակությունը վարժվեր կլասիկայի յորօրինակ մեկնարարանությանը:

Արդեն պակաս զգուշությամբ ընդունվեց «Պիկովյան դաման»: Ու թեև կոմպոզիտոր Արխանգելսկին հանդգնել էր վտանգավոր մրցակցության մեջ մտնել մեծ Զայկովսկու հետ, այնուհանդերձ ոգեշունչ ու համարձակ ներկայացում ստացվեց: Հեարամիտ լուծուններ ունեին զգեստ-

<sup>1</sup> ՅԳԱՀԻ, Բ. Սադովսկու արխիվ:

ներև ու դեկորները, բեմում սովորական ծանրաշարժ իրերը փոխարինվել եին թերթե ու նըրբագեղ իրերով: «Թղթախաղի սեղանի եզր, մի քանի խաղացող, հագուստների խայտարդեան քավշի և կեղծամների վրա լույս ափոռող մի աշտանակ և... ֆանտազիա»<sup>1</sup>, — գրել է Ն. Էֆրոսն այդ բեմադրության մասին: Զյունածածկ պատուհանից այն կողմ պատվող մի քանի մարդու որովապատկեր — և պարահանդեսի տպավորություն էր ստեղծվում, իսկ ամբողջ ներկայացնան զարդն էր «անկրկնելիորեն գեղեցիկ» Տ. Դեյկարխանովան, որ հիանալի պարում էր, արտասանում, երգում:

«Չղջիկի» դասական խաղացանկն սկսեց ավելի ու ավելի ընդլայնվել: Բ. Սադովսկուն գրած նամակներից մեկում (1914 թ. նոկտեմբեր) Բանինը խնդրում է Լերմոնտովի «Գանձապետի կինը» հարմարեցնել դրամայի: Իսկ նույն թվականի նոկտեմբերի վերջին նա գրում է, թե «Գանձապետի կին» արդեն ներկայացվում է Ե. Տու-

<sup>1</sup> Н. Эфрос, Театр «Летучая мышь» Н. Ф. Балеева, М., 1918:

նաևովայի, Յա. Վոլկովի և Ի. Լագուտինի կատարմամբ:

Թատերախումբն առանձին հաջողության հասավ Գոգոլի «Ծինելի» բեմադրության մեջ: Նշանակալից էր արդեն փաստն ինքը՝ այդ վիպակի ընտրությունը, մի երկ, որ, Վ. Բելինսկու խոսքով ասած, դարձել էր «բողոքի անխանչանակ» ընդում անհավասարության ու անարդարության: Եվ բեմադրության ժամանակն էլ շատ չէր տարբերվում գոգոլյան ժամանակներից: Իշխում էին մարդկային արժանապատվությունն սպանող հույն կամայականությունն ու բյուրոկրատիզմը, «փոքր» մարդուն կործանման դատապարտող նույն դաժանությունն ու անտարբերությունը:

Վիպակը բաժանված էր մի քանի մասի: Պոդգոռնին Ակակի Սկակինիչի դերում քայլ առ քայլ բացահայտում էր իր հերոսի՝ վիրավորված ու ստորացված այդ աննշան մարդու ողբերգությունը, որ ծավալվում էր հին Պետերբուրգի ֆոնի վրա:

Գոգոլը Բալինի միտքն ու երևակայությունը գրադեցրեց մի քանի տարի շարունակ: 1915-ի մայիսին նա գրեց Սադովսկուն. «Մտադիր եմ այս տարի պատկերներ բեմադրել «Մեռած հո-

գիւներից», շատ եմ խնդրում Ձեզ՝ ձեռնամուխ լինեք դրանց բեմականացմանը... Կրեմադրվի հիճգ տեսարան՝ Զիշիկով, Պլյուշկին, Կորոբչ-կա. Նոգդրն, Սորակեսիչ...»<sup>1</sup>: Բանի որ Բաղիկը, բնականաբար, «Մեռած հոգիներն» ամբողջությամբ չէր կարող բեմադրել իր թատրոնում, ուստի որոշեց սահմանափակվել առավել բնորոշ ու տպավորիչ մի քանի հատվածով:

Նույն թվականի հուլիսին Բալիկը հանդուգն փորձ է անում բեմադրելու Գոգոլի «Քիթը»: «Ասեք ինձ,— գրում է նա Սադովսկուն, կարելի՞ է մի քանի ապրել Գոգոլի «Քիթը» գործից...»<sup>2</sup>:

Ծառերն այն կարծիքին են, թե անհնար է բնականացնել այնքան ինքնատիպ այդ վիպակը, պնդելով, որ բոլոր փորձերը նախապես դատապարտված են ձախողման:

Բաղիկի հղացմանն ու պատերացումներին համապատասխան վիպակի բեմականացումն իրագործել հաջողվեց միայն 1917-ին: Ուշագրավ է այն, որ ներկայացումը պատրաստվեց Հռկ-տեսքերյան հեղափոխության օրերին: Բալիկի

<sup>1</sup> ՑԳԱԼԻ, Բ. Սադովսկու արխիվ:

<sup>2</sup> Նույն տեղում:

հասնարձակ բայլը վարձատրվեց լիովի՝ ստաց-  
վեց թարմ ու հրատապ ներկայացում։ Սադով-  
սկուն ուղղված ճամակում ևա ընդհանուր գծե-  
րով վերարտադրել է ներկայացման պլանը. նախ՝  
«Եկորացիան Ծովակալության շենքի դիմացի  
առափնյա փողոցն Է», «արթնացող Պետերբուր-  
գի» երաժշտության ներքո, սփինքսի արձանին  
կործած, կանգնել է Գոգոլը<sup>1</sup>:

Պատահական չեր, որ ցարական Ռուսաստա-  
նի կարգերը անողոք ծաղրով մերկացնող գրողի  
դերակատարին Բալիկը կանգնեցրել էր ինքնա-  
կալության շուքն ու զորությունը խորհրդանշող  
Ծովակալության շենքի դիմաց։

Բեմում վիպակի բոլոր իրադրանությունները  
վերապատկերելն անհնար էր, սակայն Բալիկին  
սիանգամայն հաջողվել էր ծաղր ու ծանսկի են-  
թարկել բյուրոկրատիզմի անհոգի ներկայացու-  
ցիչներին, սատիրական գույներով պատկերել  
քաղաքական ճնշումն ու իշխանությունների բիրտ  
կահայականություննը, դառն հեգնանքով ցույց  
տալ իրականություննը և ծիծաղել նրա վրա։ Հենց  
միայն այն, որ Բալիկը Գոգոլին հակառակ էր

<sup>1</sup> ՅԳԱԼԻ, Բ. Մադովսկու արխիվ։

ինը նակավության ուժի խորհրդաւնիշին, խոտում էր երկի գաղափարի կենսագործման և այն մասին, թե որքան համարձակ էր Բալիկի հղացումը:

Հիրավի խնդում ու զվարճապի էր «Պատմություն այն մասին, թե ինչպես վիճեցին Եվան Եվանովիչը ու Եվան Նիկիֆորովիչը» Աերկայացումը: Բալիկը վառ, հյութեղ գույներով էր պատկերել գոգոլյան Միրգորոդը և սրտանց ծիծաղում էր նրա բնակիչների՝ «մարդկության այդ կենդանի ծաղրանկարների» (Վ. Բելինսկի) վրա: Եվ, որպես ամփոփում, Աերկայացման ֆինալում հինգում էր այնքան ծանոթ խոսքը՝ «Տիուր է այս աշխարհում, պարոնայք...»:

Գոգոլի վիպակների և պիեսների բեմադրությունը Բալիկին հնարավորություն տվեց սուր ու դիպուկ և, միաժամանակ, անպատճ ծաղրել շրջապատող իրականություննը, ցուց տալ ժողովը իրավագործի վիճակը:

Բալիկն այս ուղղությամբ ևս մի քայլ արեց՝ նորից դիմեց Գոգոլին, քայլ նոր Աերկայացումն այս անգամ մեծ երգիծաբանի անմահ կատակերգության մոտիվներով էր— «Թե ինչ պատահեց Խլեստակովի մեկնելու հաջորդ օրը»: Տեսարանն ընդամենը երեք րոպե էր տևում: Բեմում

հավաքվում էին «Ռևիզորի» բոլոր գործող անձինք: Նրանք արդեն հասկացել են, որ Խլեստակովը խաբել է իրենց: Վայրկյան առ վարկյան պետք է հայտնվի իսկական ռևիզորը: Զեմլյանիկան, որպես ամենափորձվածը բոլորի մեջ, առաջարկում է փող հավաքել ու կաշառել նրան: Եվ առա ռևիզորի ներկայությամբ նա իբր պատահաբար ցած է գցում փողի ծրաբը և դիմում նրան՝ «Զեր ծրաբն ընկավ...» Ռևիզորը, իրեն չկորցնելով, պատասխանում է կարճ ու կորուկ «Երկո՛ւսը»: Չինովենիկները թեթևացած շունչ են քաշում: Այս փոքրիկ դրվագն ընդգծում էր, որ ցարական Ռուսաստանում Գոգոլի ժամանակներից այս կողմ ոչինչ չի փոխվել: Միայն պաշտոնյաները դարձել են ավելի լկուի, կաշառակերները՝ ավելի ագահ... «Ահա նա՝ ժամանակակից Ռուսաստանը», — ամփոփում էր Բայինը:

Սիրելով դասական գրականության երկերը և հաճախ բեմականացնելով դրանք, Բայինը, սակայն, միշտ գգուշանում էր, որ հանկարծ ակամա չգրենիկացնի կամ չանհամացնի այդ գործերը: Ուստի Սադովսկուն հղված մի նամակում խընդրում է ուշադիր կարդալ Զեխովի «Հարանիքը» և, ըստ հնարավորին, վերափոխել օպերետի

համար՝ «պահպանելով ոճը... Այնպես, որ վիրավորանք չհասցվի Ա. Պ. Չեխովի ժառանգությանը»<sup>1</sup>:

Չեխովի «Հարսանիքի» բեմադրությունը Բալելը հանդիսատեսի դատին հանձնեց Կնիպպեր-Չեխովայի հավանության արժանանալուց հետո միայն:

«Չղջիկի» ծառայություններից մեկն այն էր, որ թատրոնը հանդիսատեսին իրականությունից չեր կտրում զուտ հետաքրքրաշարժ համարնելով, կարողանում էր հեռու մնալ զվարճանքի, բուժունադի, թեթևամիտ երաժշտության ու անեկդոտների գայթակղությունից և առաջնորդվում էր ճշմարիտ գեղարվեստական խաղացանկով միայն:

Բալինի բեմադրությունների մասին գրել է Աշանավոր թատերագետ Պ. Մարկովը՝ բարձր գնահատելով նրա և ամբողջ թատերախմբի վարպետությունն ու արտիստականությունը. «Թատրոնը հիրավի կարող էր պարծենալ իր մեծ ճաշակով, այստեղ աիրում էին նորբագեղ ոճավորումներ»... «Չղջիկի» ապշեցուցիչ հաջողությունը նա բացատրում է այն բանով, որ «մեծ մասամբ ոչ

<sup>1</sup> ՅԳԱԾԻ, Բ. Մադովսկու արխիվ:

այնքան նշանակալի իր խաղացանկը թատրոնը  
մարմնավորում էր միասույան գեղագիտական  
խառապահանջությամբ, խմում էր փոքրիկ, բայց  
սեփական բաժակով»<sup>1</sup>:

Բային էլ, այդ ժամանակվա մտավորակա-  
նության որոշ մասի նաև, չեր ըմբռնում տեղի  
ունեցող իրադարձությունների և Հոկտեմբերյան  
հեղափոխության նշանակությունը: Բայինը չեր  
կարողանում հասկանալ ու կոահել նաև այն, թե  
ինչպես պետք է վերակառուցվի իր թատրոնը,  
ինչ նոր ուղիով պիտի ընթանա: Այսուղի աշխա-  
տելն ավելի ու ավելի դժվար էր դառնում, դե-  
րասանները ցրվում էին այս ու այն կողմ, միջոց-  
ներ չկացին:

1918-ի աշնանը մի փոքր խմբով նա հյուրա-  
խաղերի գնաց Կիև, Օդեսա:

1919-ին և 1920-ի գարնանը Բայինի անունը  
դեռ երևում էր մուկովյան ազդագրերի վրա: Ամ-  
ուսնանը հյուրախաղերի մեկնեց հարավ, համերգ-  
ներ տվեց Կարմիր բանակի ջոկատների համար,  
քարվում հանդես եկավ երկաթուղարիների ա-

<sup>1</sup> «Թատր» հանդես, 1968, № 12, էջ 66:

ուած: Հետո Բաթումով գնաց Կոստանդնուպոլիս, այնտեղից Էլ՝ Փարիզ:

## II

Առաջին ամիսները Փարիզում անտանելի ծանր էին: Թատերախումբը գրեթե քայրայված էր, դրամական միջոցները չեին բավականացնում, Բաղիևը վատ էր տիրապետում ֆրանսերենին: Նու մեծ դժվարությամբ խումբ հավաքեց: Հիմնական կազմի մեջ մտաւ S. Դեյկարիսանովան, Ա. Ֆեխատները, Մ. Վավիշը, Ի. Կարաբանովան, Մ. Դոլմատովը: Այդ տարիներին Փարիզում էին Մեյերխոլդի թատրոնի նկարիչ Ա. Սուդեյկինը, «Նովի Սատիրիկոն» հանդեսում տըպագրված իր ծաղրանկարներով հայտնի Ն. Ռեմիզովը, կոմպոզիտոր Ալ. Արխանգելսկին, որոնք երկար տարիներ Բաղիևի գործընկերները եղան:

Արդեռ 1920-ի վերջին և 1921-ի սկզբին ֆրանսիական թերթերում կարելի էր հիշատակումներ տեսնել Բաղիևի թատերախմբի փորձերի մասին: Խսկ 1921-ի փետրվարին մամուլը հաղորդում է, որ Բաղիևի թատերական ծրագիրը

հայվաքել է «ողջ Փարիզը և անցել իսկական հաջողությամբ», և որ «մի գիշերվա մեջ Բալինն անցավ փարիզյան հոչակավորների շարքը»:

Որոշ զգուշավորությամբ, բայց և հույսով Բալիկը վերականգնեց թատրոնի «Չոշիկ» («Chauve Souris») անոնը և սկսեց հանդես գալ «Ֆեմինա» թատրոնի շենքում:

Հիմնականում վերահսկատառվեց հաև հախին ծրագիրը՝ երաժշտական պատկերներ, շարժեր, սատիրա, պարեր, դասական երկերի բեմականացումներ:

1921-ի ապրիլին թատրոնի հաջողությունը նաևավ այն աստիճանի, որ Փարիզի թատերական կյանքի առավել վառ ու ցեղող իրադարձություններն ու երևույթները լուսաբանող, Ֆրանահրայում ոնեծ կշիռ ունեցող «Comedia illustre» թատերական հանդեսը իր համարներից մեկում հանգանակալի քննախոսական տպագրեց և տրվեց Բալինի թատրոնի ընդհանուր գնահատականը: «Չոշիկ» Մուկվայի հիանալի թատրոններից մեկն է, որի հոչակը տարածվել է Ռուսաստանի սահմաններից դուրս, — գրում է թատերախոսը: Դա «լավ տրամադրության թատրոն» է, իրենց մեջ «խաղը, լույսը, եքսպրեսիան,

գույները ներդաշնակորեն զուգորդող» եզակի,  
հետաքրքիր համարների թատրոն: Բոլոր արտա-  
հայտչամիջոցները՝ դիմախաղ, բեմավիճակ, երգ  
ու պար, օրգանապես սինթեզվում են այս յուր-  
օրինակ արվեստում: «Փարիզը չուներ այս թատ-  
րոնի համարժեքը», — շարութակում է քննադա-  
տը՝ միաժամանակ ընդգծելով, որ դա զուտ ուս-  
ական երևույթ է, և որ Բալիսի «փոքրիկ թատ-  
րոնը մեծ բեմի արվեստ է ներկայացնում»<sup>1</sup>:

Այնուհետև թատերախոսը նկատում է, որ այս  
թատրոնի յուրաքանչյուր դերասան ձգտում է հը-  
նարավորին չափ մատչելի և հետաքրքիր մա-  
տուցել իր համարը, դրսորել իր հնարավորու-  
թյունների և տաղանդի առավելագույնը:

Հատուկ հիշվում է «Բախչիսարայի շատրվա-  
նը» Ենրկայացումը և, ամենից առաջ, Ն. Ռեմի-  
զովի Էսքիզներով վարպետորեն արված դեկո-  
րացիան ու գգեստները: Վառ ու տպավորիչ էր  
Տեղաբարխանովան Զարենայի դերում՝ նկուն ու  
կրակուն, ի հակառակ նուրբ ու եթերային Կա-  
րաբանովա-Մարիայի: Գիրեյի կերպարում շեշտ-  
ված էր արևելյան կողորդիտը, նա և կինը թերթեն,

<sup>1</sup> «Comedia illustre» Հանդես, 1921 թ. ապրիլ:

թափանցիկ գգեստներով էին: Ալ. Արխանգելս-կու երաժշտությունը լրացնում և ընդգծում էր սուեմի դրամատիզմն ու կանանց պարերի նրբագեղությունը:

Հանդեսն ըստ արժանվույն գնահատեց «Կատենիկս» երաժշտական համարը, որ համարյա ասեն երեկո ընդունվում էր «քիս»-ով և կրկնավում: Սակայն Կատենիկս Փարիզում այլ գգեստով էր. դնում էր Լոի Բոնապարտի ժամանակ-ըերի փոքրիկ գլխարկ, իրանը պիրկ սեղմված էր, երևում էին անդրավարտիքի ժանեկազարդ եզրերը: Եվ չնայած համարը կառարվում էր ոու-սերեն, հանդիսատեսը հասկանում էր խորա-նանկ կառակի իմաստը. քաղքենության ծաղրն օտար չէր ֆրանսիական բեմին՝ դեռ Մոլիերի Ժամանակներից:

Հետաքրքիր հոդացում ունեին «Մեծատոհմիկ անձանց ծխատուիկերը» ընդհանուր խորագրով չորս գեղանկարչական պատկերները, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր ինքնատիպ սյուժեն՝ «18-րդ դարի մարկիզուիին», «Վոլտերն ու պար-սից շահը», «Ռուս կազակի հրաժեշտը». սրանց գործող անձինք կենդանանում էին և Ծովենի ե-րաժշտության առաջ մազուրկա պարում:

Փարիզիներն սկզբում չէին հասկանում ուրիշ թատրոններից այնքան տարբեր «Չղջիկի» ուն ու բնույթը, ուստի ֆրանսիական թերթերը հիշեցնում էին, որ Բալինն այստեղ «նյութական և գեղարվեատական հաջողության» է հասել ոչ խսկում։ Այդ մասին հիշել է նաև ինքը՝ Բաղիկը, 1922-ի մարտին Ն. Էֆրոսին գրած իր Խամակում։ Փարիզն սկզբում նրան զուապ է ընդունել, բայց հետո հաջողությունը «նվաճվել է մեկընդմիշտ»։ «Չղջիկի» ներկայացումների տոմսեր դժվար եր ճարել։ «Ամենիքին հիացում պատճառեց մեր ներկայացման պարզությունը, այն, որ զերծ եր դուզվն ինչ գոեհկությունից, նրա մանկական արտակարգ անմիջականությունը»<sup>1</sup>, — գրում է Բալինն Էֆրոսին։

Սկզբում ընդամենը մի քանի ֆրանկ «կապիտալ» ունենալով, Բալինի խումբը Փարիզում գոյություն արահպանեց ուժ ամիս՝ անհավատալի իրություն ուստական ծրագիր ունեցող թատրոնի համար։ Նրանք մեծ միջոցներ էին վարակում, և «աշխարհի ոչ մի մաղթեմատիկոս չեր

<sup>1</sup>ՄԽԱՏ-ի թանգարան, Ն. Ֆ. Բալիկի արխիվ:

Նարող հասկանալ, թե ինչպես կարող էր նման  
բան պատահել»<sup>1</sup>, — նիշում է Բալիկը:

«Զղջիկի» հաջողությունն այնքան մեծ էր, որ  
1921-ի մարտին Փարիզի թերթերը խոստովանե-  
ցին ուսական թատրոնի հարցորդերորդ ներկա-  
յացումը «անտարակուաելի հաղթանակ էր, և Ն.  
Ֆ. Բալիկի տաղանդն անհերքելի է և ակնառու»:  
Օսար լեզվով բեմադրված՝ Զեխումի «Վիրահա-  
տությունն» ու Տուրգենևի «Ինչ լսվը, ինչ թարմ  
էին վարդերը» արձակ բանատեղծությունը Փա-  
րիզում հասկանալի էին ամենքին:

Նույն թվականի մայիսին Բալիկնին խնդրեցին  
համերգ տալ ֆրանսիական թատրոնների դերա-  
սանների համար:

Փարիզի Աշանտվոր դերասաններն ու թատե-  
րական ողջ հասարակայնությունն անուարքեր  
չմնացին «Զղջիկի» նկատմամբ: Հիանալի ուժի-  
սոր և դերասան Ա. Անտոնանը այն կարծիքը  
հայտնեց, թե «դա ամենաերևելի ու ինքնատիպ  
թատրոնն է», և որ նրա յուրաքանչյուր ներկա-

---

<sup>1</sup> ՄԽԱՏ-ի թանգարան, Ն. Ֆ. Բալիկի արխիվ:

յացումը լի է «հաճելի անակնկալներով ու Էն-  
տուգիազմով»<sup>1</sup>:

Մի որիշ Աշանավոր ռեժիսոր՝ Լյութիկ Պոն  
«L' Eclair»-ում գրեց, թե «Զղջիկի» Աերկայա-  
ցումը նման է «մեծ դասի»: Իսկ «Comedia»  
հանդեսի թատերախոսը մկանեց, թե ինքը չի  
Բիշում ոչ անցյալում եղած և ոչ էլ Աերկայումս  
գոյություն ունեցող որևէ թատրոն, որը կարողա-  
նար համեմառովել «Զղջիկի» հետ:

Բալիսը չէր սահմանափակվում միայն իր  
խմբի դերասաններով և հաճախ որիշ թատրոն-  
ներից դերասաններ էր հրավիրում: «Զղջիկում»,  
օրինակ, հաջողությամբ հանդես եկավ Փրան-  
սիսցի երգչուի Սպիթելին, որ կատարեց ոու-  
սական «Յօ սադ լի, Յօ օգործե» երգը:

1921-ի վերջին Փրանսիական թերթերը գրե-  
ցին, թե վեց ամիս է արդեն, ինչ Փարիզի թատ-  
րոնների բևմերից «ամեն երեկո հնչում է ոուսաց  
լեզուն»: «Իսկ Փարիզում «Զղջիկի» նման երկա-  
րատն գոյության փաստն արդեն, անկախ նրա  
գեղարվեստական ձեռքբերումներից և Փրան-  
սիսկան թատերական արվեստի վրա ունեցած

<sup>1</sup> «Comedia illustre» Հանդես:

ազդեցությունից (որ անհերքելի է), չի կարելի կարևոր փաստ շնամարել ոռոսական թատրոնի պատմության մեջ»<sup>1</sup>:

Կարճ ժամանակ անց «Ֆեմինա» թատրոնի դահլիճն այլևս անկարող էր տեղավորել «Չըդշիկի» բոլոր հանդիսատեսներին ու երկրպագուներին, այնպէս որ ներկայացումներն ստիպված փոխադրվեցին «Գոմոն» թատրոնի վեց հազար տեղանոց դահլիճը:

«Չըդշիկի» նման հաջողությունը կարելի է բացատրել այն բանով, որ 20-ական թվականներին, մինչ ֆրանսիական թատրոնի խոշորագույն վարպետները՝ Անտուանը, Կոպոն, Դյուկենը, Ժուլենը, Բատին, Փիթոնը և մյուսները դրամատիկական նոր ձևեր, գեղարվեստական նոր միջոցներ էին որոնում՝ արդիական գաղափարներ արտահայտելու, թատրոնը հումանիզմացման ուղին դուրս բերելու համար, մյուգիկ-հոլլերում և թատրոն-վարչեաններում ծաղկում էր էժան, ցածրաճաշակ արվեստը։ Այդ ժամանակվա մասին Ժ. Կոպոն գրում է, թե թատրոնն անցել է չարչիների ձեռքը, «ամենուր տիրում է դատարկաբանությունը»։

<sup>1</sup> «Comedia illustre» հանդես։

«բացեիցաք ի ցուց է դրվում ճղճիմն ու գոեհիկը, որ մակաբուծվում է մեռնող արվեստի պայմաններում, արվեստ, որի մասին այլևս անկարելի է լրջորեն խոսել»:

Ուստի և հանդիսատեսը, հոգնած գոեհիկաբանություններից ու պոռնոգրաֆիայից, ձգտում էր «Չղջիկի» նոր, մաքոր, պոեզիայով ու մարդկայնությամբ լի արվեստին՝ հրապուրված համարների թարմությամբ, գուների, հնչյունների ներդաշնակ կատարելությամբ, հետաքրքիր դեկորացիաներով ու զգեստներով:

Նրանսիացի հանդիսատեսի համար իր անսովորությամբ հետաքրքիր էր Ստենկա Ռազինին նվիրված ժողովրդական հայտնի երգերից մեկի («Из-за острова на стражень»...) բեմականացումը: Երգը կատարվում էր նվագակցությամբ, բեմ էր հանվում «գեղազարդ մի մակույկ», որի մեջ Ռազինն էր «մատաղ իշխանադատեր հետ»: Սակայն Ստենկայի ընկերները քրթմնջում են, թե, ահա, ատամանն իրենց «փոխել է մի ինչ-որ կերպ հետ»: Ընկերների ծաղրն ու տրտունջը ահեղ ատամանի ականջն է ընկնում, և նա «հզոր մի թափով բարձրացնում է իշխանադատերը գեղեցիկ և նետում ծառացած ալիքների մեջ»—

«իբրև զոհ՝ մատուցված Դոնի կազակի ձեռքով»։ Այս ամենը կատարվում էր հանդիսատեսի աշքի առջև՝ ասես հինավորց երգի իլուստրացիան դառնալով։

Ֆրանսիացի թատերասերների համար նման հաճելի անսկնելիալ էր նաև Ի. Ռեպինի «Զապորոժցիները նամակ են գրում թուրք սովորանին» նկարի բնականացումը։ Կտավը շնչավորելու մտադրությամբ Բալիկը շտապ հեռագիր տվեց Ալ. Սրխանգելսկուն՝ խնդրելով «Զապորոժցիների» համար երաժշտություն գրել մոտավորապես Մուսորգսկու ռնով։

Պատահական չե, որ Բալիկի ընտրությունը կանգ առավ Ռեպինի այս գլուխգործոցի վրա։ Ակարը նրան գրավում էր իր արտասովոր էքսպրեսիայով, որը «ծիծաղը Զապորոժյան Սեչի անսահմանորեն ազատ ու անկաշկանդ կյանքի խորհրդանիշն է դարձել»<sup>1</sup>։

Բավական է հիշել կտավի յուրաքանչյուր «գործող անձի» կենդանի և ահեղորեն զավեշտական կերպարանքը՝ պատկերացնելու համար, թե որ-

<sup>1</sup> И. Грабарь, Репин, в двух томах, М., 1964, էջ 66:

քան դժվար է բեմադրել նման տեսարանը: Եվ, այնուհանդերձ, Բալիկը ձեռնամուխ եղավ իր հղացումն իրագործելուն: Բեմում դրված էր նկարի հսկա շրջանակ, որի մեջ, ասես կտավի վրա, ճիշտ և ճիշտ ռեպինյան կազակների կեցվածքով ու կերպարանքով քարացած մարդիկ էին՝ Զապորոժյան Սեչի ժամանակներին պատկանող զգեստներով, զենք ու զարդով, նվագարաններով:

Ալ. Արխանգելսկու երաժշտության ներքո իրար ետևից «կենդանանում էին» Ռեպինի հերոսները, և հանկարծ թնդում էր «զապորոժյների վայրի, անսանձ, հրեշտավոր քրիչը, որ Ռեպինը հասցրել է ծիծաղի, խրախնանքի, ծաղրի տարերքի...»<sup>1</sup>: Նրանք, խելք-խելքի տված, սպանիչ ծաղրով լի նամակ էին նորինում՝ ուղղված թուրք սուլթանին, նամակ, որ լի էր «օռղ-ավազակ», «շուն-շան որդի» և նման ոչ այնքան սիրալիր արտահայտություններով: Իսկ մի քանի րոպե անց բեմում նույն համր ու անշարժ, պատկերն էր:

Ֆրանսիացի հանդիսատեսն աշխույժ հետաքրքրությամբ էր ընդունում Բալիկի ծրագիրը:

<sup>1</sup> И. Грабарь, Репин, в двух томах, М., 1964, т. 75.

Ուշագրավ էր և այն, որ բոլոր համարները կատարվում էին ոռուերեն, բացի «Մեծ մարդկանց ասույթներից», իսկ Բալիկն ինքը ծրագիրը վարում էր ֆրանսերեն: «Որևէ օտար լեզվի ինչպես հարկն է չտիրապետելով հանդերձ, այդ տաղանդավոր ելույթավարը կարողանում էր ծիծաղեցնել այլալեզու հասարակությանն իր միտումնավոր կոտրատված լեզվով»<sup>1</sup>, — գրում է Վ. Ալեքսանդրովսկին «Օտար ափերին իմ ապրածներից» գրքում:

Միաժամանակ, նույնիսկ ֆրանսերենին լավ չտիրապետելով, Բալիկը բեմում հայտնվելուն պես կարողանում էր ստեղծել մտերմական մըթնոլորտ, անմիջական կապ հանդիսատեսի հետ՝ ասես նրան ներկայացման մասնակից դարձնելով:

Ամերիկան թատերասերներից մեկը՝ Լյուիին Դեսկավյեն գրել է «L' Yntransigeant»-ում. անհավատալի է այն փաստը, որ «...անհականալի լեզվով խոսող արտիստները կարողանում են պլաստիկայով ու շարժումներով, դիմախաղի և

<sup>1</sup> Б. Александровский, Из пережитого в чужих краях, № 255:

լավ դրված բեմավիճակների օգնությամբ արտահայտել իրենց այդպես կատարյալ»<sup>1</sup>:

Փարիզյան հաղթանակից հետո «Չղջիկը» հյուրախաղերի հրավիրվեց Խապանիա, Սան-Սեբաստիանո, որ եղավ 1921-ի օգոստոսին: Խապանիայի հյուրախաղերի մասին Բալիկը պատմում է Էֆրոսին գրած իր նամակում, հաղորդում այդ գեղեցիկ երկրից ստացած իր տպավորությունները, և այստեղից իմանում ենք, թե ինչ մեծ ընդունելության է արժանացել թատերախումբը, որի ներկայացումներին ներկա է եղել թագուհին:

Խապանիայից Բալիկի խումբը հյուրախաղերի մեկնեց Անգլիա, որ առաջին ներկայացումը տրվեց սեպտեմբերի 8-ին: Անգլիացի հանդիսատեսից ստացած իր նախնական տպավորությունների մասին Բալիկը պատմում է Էֆրոսին գրած նոյն նամակում: Ելնելով բեմ, նա հանդիպում է քավական «անտարբեր հասարակության». «մոնուկլներով նայող մարդկանց աշքերում ինչ-որ սառնություն կար, երբ ես անգլերենը վիրավորող լեզվով արտասանեցի առաջին նախադա-

<sup>1</sup>ՄԽԱՏ-ի թանգարան, Ն. Ֆ. Բալիկի արխիվ:

սությունը՝ հասարակությունից Աերողություն  
խնդրելով իմ առոգանության համար»: Սակայն  
«Զինվորիկների զորահանդեսը» համարից նետո  
հանդիսատեսը նկատելիորեն մեղմվեց, և «դահ-  
լիճը, որը սկզբում 1000 մարդ կար, հետզհետեւ  
լցվեց ու դարձավ 4 հազարանոց»<sup>1</sup>:

«Զղջիկը» վեց շաբաթ ելույթ ունեցավ Լոնդո-  
նում, և անգլիացի հասարակությունը, ոուսերեն  
չհասկանալով հանդերձ, այդ թատրոնը «հայո-  
ւություն» համարեց՝ ընկալելով բեմում կատար-  
վող ամեն ինչ:

Ներկայացումներից մեկի ժամանակ Բալիկին  
դափնեպսակ ճպիրեցին: Անգլիացիները, մոռ:  
ցած իրենց սառությունը՝ «սպիսֆլեգման, սկս-  
ցին ձայնակցել երգող մեր «գնչուներին»— «Էք  
րազ, ուղե քազ...»,— հիշում է Բալիկը:

Առանձին հաջողություն ուներ «Մալբրուկ»  
զավեշտական տեսարանը, որը պատկերվում էին  
կոնճարանող կաթոլիկ վանականներ, որոնք եր-  
գում էին Մալբրուկի երգը: Սա ժողովրդական  
զվարթ երգ է երկար ժամանակ արշավի պատ-  
րաստվող գեներալի մասին, որը, երբ վերջապես

<sup>1</sup>ՄԻԱՏ-ի թանգարան, Ն. Ֆ. Բալիկի արխիվ:

պատրաստ է ճանապարհվելու, հանկարծ, «իր սովորը տեսնելով», ստամոքսի խանգարում է ստանում և այդպես էլ կոիվ չի գնում: Ժողովորդը այդ երգը հորինել էր անգլերեն ու ֆրանսերեն և հարմար առիթով «կացնում էր» այս կամ այն պետական գործչին, որն այնքան էլ չէր փայլում իր խիզախությամբ:

Ֆրանսիական թերթերը շարունակում էին հետևել Բալինի թատերախմբի ելույթներին Անգլիայում: Գրում էին, թե անգլիացի հանդիսատեսի սպասումները «զգալիորեն նվազ էին, քան այն, ինչ նա տեսավ»: «Ո՞ւմ մտքով կանցներ, թե անգլիացի հասարակությունն այդքան ջերմ, այդպիսի հիացումով կընդունի «Կատենկան», «Չառուշկաները», այդպես զվարժ կըրքա, այդպես բարձրաձայն և միահամուր իր հաճությունը կարտահայտի», — գրում էին թերթերը:

Հաջողությունն ուղեկցեց «Չղիկին» ոչ միայն Լոնդոնում, այլև Մանչեստրում և Անգլիայի ուրիշ քաղաքներում: 1921-ի հոկտեմբերի մեկին թատերախումբն առաջարկ ստացավ՝ ևս մեկ ամիս երկարաձգել պայմանագիրը: Ելույթները շարունակվեցին մինչև նոյեմբերի 15-ը, որից հետո թատրոնը շորսամսյա շրջագայության մեկնեց

Ամերիկա: Եվ Լոնդոնի «Ալհամբրա» թատրոնի վարչությունն առաջարկեց Ամերիկայում շրջագայություններն ավարտելուց հետո վերստին գալ Անգլիա հյուրախաղերի:

Անգլիական թերթերը անտարբեր չմնացին «Չղջիկ» թատրոնի և, մասնավորապես, իր՝ Բալիկի նկատմամբ: Այդ թերթերն ընդգծում էին Բալիկի վառ անհատականությունը, նրա արտիստականությունը, ոչ միայն շաբլոնից հեռու, հետաքրքիր խաղացանկ ստեղծելու նրա կարողությունը, այլև դերասանական ու ռեժիսորական վարպետությունը: «Բալիկի անհատականությունըն ամբողջ թատերախմբի վիթխարի հաջողության գլխավոր գործոնն է», — գրեց «The Evening News» թերթը: Իսկ «The Daily Sketch» թերթի թատերախոսը փորձեց բացարձև, թե որն է անգլիացի հանդիսատեսների շրջանում թատրոնի ճաման հաջողության պատճառը. «... Ներկայացումը զարմացնում է իր բազմազան հումորով և, տարօրինակ է ասել, իր պարզությամբ: Ոչ մի պառկա, ոչ մի տաղտուկ, ոչ մի կեղծ ճոտա, ամեն ինչ նոր է, նոր և նոր»: Բալիկի արվեստում թատերական քննադատներն այսօրվա, ժա-

մանակակից արվեստն էին տեսնում՝ «առանց պիտակների»:

Անկասկած Բալիսի անձը, նրա հարուստ երեւակայությունը, արտակարգ ընդունակությունները, հանդիսատեսի և դերասանների միջև կենդանի, անմիջական կապ ստեղծելու կարողությունը անկրկնելի բնույթ էին հաղորդում թատրոնին: «Բալիսը եզակի է և անհերքելի», — գրեց «The Star» թերթը:

Իմպրովիզատորի տաղանդը վիթխարի դեր էր խաղում ինքնատիպ համարներ ու բեմավիճակներ ստեղծելիս: Բայց քչերը գիտեին, թե ինչ դժվարությամբ էր ծնվում յուրաքանչյուր համարը. երկու-երեք րոպեանոց տեսարան բեմադրելու համար Բալիսն ատիպած էր լինում փորձել հարյուրավոր անգամներ՝ ամեն ինչ հասցնելով կատարելության, համարը դարձնելով ծայրատիճան վառ ու արտահայտիչ: Այդ բանին կարելի էր հասնել միայն ամբողջ թատերախմբի վարժվածության և համախմբվածության դեպքում, որին ձգտում էր Բալիսը թատրոնի հիմնադրման օրից. սկսած դերասանից մինչև բարապանը՝ քոլոր-քոլորը պետք է հաղորդակից լինեին ներկայացման ստեղծմանը:

1921-ի հունիսին ամերիկացի հայտնի անտրեպրենյոր Մորիս Հեստը Փարիզի «Ֆեմինա» թատրոնում տեսավ Բալիկի ելույթները և այնուհետև դարձավ «Չղջիկի» մշտական հանդիսատեսը: Հեստին այնքան դուր եկան այդ խմբի ներկայացումները, որ նա որոշեց ոփակի դիմել և Բալիկի թատրոնը հրավիրեց Ամերիկա՝ չորս ամսվա պայմանագիր կնքելով:

Ամերիկացի թատերագետ Օլիվեր Սեյլորը գլորեց, թե Մորիս Հեստը «թատերախումբն անցկացրեց օվկիանոսն ու քերեց այստեղ՝ փայլուն հաջողության հասնելու հույսով, որը և ավելի քան արդարացրեց նրա լավագույն ակնկալիքները և հաստատեց ամերիկացիների սերն արվեստի ճկատմամբ»<sup>1</sup>:

Բալիկը համաձայնություն տվեց, և 1922-ի հունվարի վերջին «Չղջիկը» ժամանեց Նյու-Յորք, իսկ չորս օր անց, փետրվարի 3-ին առաջին ներկայացումն էր այստեղ:

Ֆրանսիացի հանդիսատեսների շրջանում ձեռք քերած գլխապտույտ հաջողությունը մեկնա-

<sup>1</sup> Հատուկ հրատարակված և Բալիկին նվիրված հանդես՝

» Balieff's chauve-souris of Moscow», 1923.

կետ դարձավ Բալիկի համար: «Փարիզը Ամերիկայի նախադուռն է: Փարիզյան հաջողությամբ նախապատրաստվում է ամերիկյանը և, ընդհակառակն, ձախողման դեպքում ամերիկյան հյուրախաղերը դառնում են վերին աստիճանի վրանգավոր ու կասկածելի»<sup>1</sup>:

Եթե 20-ական թվականների ֆրանսիական թատրոնների մասին Կոպոն գրում է, թե թատրոնն այստեղ գտնվում է առևտրականների ձեռքին, ապա Ամերիկայում դարասկզբին ստեղծված էր «առևտրական» թատրոնների մի ամբողջ սիստեմ, որ բուրժուական հանդիսատեսներին ծառայում էր սեքսով հագեցած «հետաքրքրաշարժ» ու զվարճալի ներկայացումներով, այսինքն՝ թատրոնը բիզնեսի տեսակներից մեկն էր դարձել:

«Զղջիկի» առաջին ծրագիրը հայտարարվեց հինգ շաբաթվա ժամկետով: Ու թեև ամերիկացի հանդիսատեսը չէր հասկանում ոուսերեն, այնուհանդերձ ներկայացումները լեփ-լեցուն դահլիճներ էին ունենում և ծրագրված հինգի փոխարեն տասնվեց շաբաթ տևեցին:

<sup>1</sup> К. С. Станиславский. Собр. соч., 5. 6, № 144.

1922-ի մայիսին, ընդամենը մի քանի շաբաթով, Բալիկի խումբը գնաց Փարիզ: Միայն այս տեղ էր Բալիկը գգեստներ, դեկորներ պատվիրում և բեմական իրեր ընտրում: Մեկ ամիս անց «Զղջիկը» վերադարձավ Ամերիկա:

Նույն թվականի հունիսից «Զղջիկն» սկսեց Աերկայացումներ տալ «Դարի տաճիք» կոչվող թատրոնի շենքում, որ հարդարել էին ոռուական ոճով: Հանդիսատեսին առաջարկվեց երկրորդ ծրագիրը, որ մնաց տասնյոթ շաբաթ, ապա և Աերկայացվեց երրորդը, որ, իր հերթին, չորրորդ ծրագրի սկիզբ դրեց: Հասարակությունը խանդավառությամբ էր ընդունում «Զղջիկի» բոլոր ծրագրերը և ձգտում էր բաց չթողնել որևէ նոր քանի:

Թատրոն-կաբարեներում սովորաբար տարիներով չէին փոխվում ծրագրերը, խաղացանկը կրկնվում էր ամեն օր, և ահա նման թատրոնների գոյության ընթացքում առաջին անգամ հանդիսատեսն այդքան շատ նոր, թարմ ու բազմազան համարներ էր տեսնում:

Հենց միայն այն, որ ոչ մի ծանրակշիռ հանդես կամ լրագիր չկարողացավ խուսափել «Զղջիկի» Աերկայացումներին արձագանքելու գայ-  
58

թակդությունից, խոսում է այն մասին, որ ամերիկացիները կատարելապես ընդունեցին այս արտասովոր ու յորօրինակ թատրոնը և, ինչպես գրեց թերթերից մեկը, «Նրա ներկայացումներին հաճախելը մոդա դարձավ», և չեղավ մեկը, որ «անտարբեր մնար» այս թատրոնի նկատմամբ:

«The New York Herald» թերթը գրեց, թե «Չղջիկն» իրենից ներկայացնում է բարձր աստիճանի հասցված կատարյալ կաքարե», և որ այն ամենից առաջ աչքի է ընկնում իր նպատակամետ ուղղվածությամբ», այլ կերպ ասած՝ «մի կաքարե, որի նմանը մինչև օրս այսուհետ ոչ ոք չի տեսել»:

Ամերիկյան մի ուրիշ թերթ նկատեց, որ արդեն առաջին ծրագիրը «հոյակապ էր», երկրորդն ավելի լավն էր, քան առաջինը, իսկ բոլորը, մեկտեղ վերցրած, մի կուռ ամբողջություն էին կազմում:

Ինչպես գրեց Օլիվեր Սեյլորը, Բալին աշխատում էր «առավելագույն հնարավորություններ քամել» քենից, յորաքանչյուր համար վարպետորեն համակցվում էր մյուսի հետ՝ ստեղծելով անսամբլի միասնություն, ինքն էլ միաժա-

մանակ թատերական արվեստի նոր ու ինքնաւտիպ ձև լինելով:

Ծրագիրը հագեցած էր լիուլի՝ Գլինկայի բալլադներից մինչև գնչուական երգերը, «Զինվորիկների զորահանդեսից» մինչև «Կատենկան» ու «Բախչիսարայի շատրվանը», և այս ամենը վերարտադրվում էր պարզ ու թեթև, ոռուական ընկալման պրիզմայի միջով:

Բալինն ինչպես փարիզյան, այնպես էլ ամերիկյան բեմ բերեց կատակերգական ժանրը՝ նրա բազմազան ու ամենասրամիտ դրսնորումներով—զավեշտական էրսպրոմտներ, փոքրիկ պիեսներ, երգ ու պար, տեսարաններ ոռու դասական գրականության երկերից: Բեմում հառնում էր Ռուսաստան իր հարուստ ավանդույթներով՝ Տուրգենևի, Չեխովի, Գորկու, Գլազունովի, Ռեպինի Ռուսաստանը:

«Զղջիկը» խորտակեց ամերիկացիների պատկերացումները Ռուսաստանի՝ իբրև մոայ ու խավարամիտ երկրի, մուժիկի և ինքնաենի երկրի, հուսորից ու ծիծաղից զուրկ երկրի մասին<sup>1</sup>:

Բալինի խմբի առաջին խոկ ներկայացումը

<sup>1</sup> Balieff's chauve-souris of Moscow" հանդես.

զարմացրեց ամերիկացիներին: Ամեն մի հանդիպմանը նորովի էր բացահայտվում ոռոսական արվեստի ողջ հարատությունը, և ամերիկացիները ոչ ոչ միայն սիրեցին այդ արվեստը, այլև հարգանքով լցվեցին բուն Ռուսաստանի, նրա ժողովորդի նկատմամբ: «Զդշիկն» ապացուցեց, թե ինչ համապարփակ ուժ ու զորություն ունի արվեստը, ասես ներկայանալով իբրև Ռուսաստանի տրուբադուր և նվաճելով ամերիկան ժողովրդի համակրանքն ու բարեկամական վերաբերմունքը: Ուստի ամերիկյան շրջագայությունների մասին իր հուշերում Ստանիլավսկին գրում է, թե Ամերիկայի և Ռուսաստանի ժողովուրդների մերձեցման և փոխըմբունման համար Գեղարվեստական թատրոնն ու Բալիսի խումբն արեցին շատ ավելին, քան «էքսպերիմենտներն ու զեկուցումները». արվեստը միացնող կամուրջ դարձավ հետավոր երկու ժողովուրդների միջև:

«Զդշիկի» հյուրախաղերը նշանակալի իրադարձություն եղան ամերիկացիների կյանքում: «The Philadelphia Public Ledger» թերթի մեկնաբան Չարլզ Վ. Դյուկը «թատերաշրջանի սենացիա» համարեց այդ թատրոնի ներկայացումները:

Նյու Յորքի 49-րդ փողոցի շենքում «Զղջիկի» առաջին իսկ ներկայացումներից հետո Բրոդվեյի շատ թատրոններ փորձեցին փոփոխություններ մոցնել իրենց խաղացանկի մեջ, վերակառուցվել՝ ընդօրինակելով Բալիկի խմբին:

Բրոդվեյի կաբարեներից մեկի տնօրեններ Զ. Կառիֆնան ու Մարկ Կոնելիս բացեիրաց Բալիկի հղացումը կիրառեցին ամերիկյան նյու-թը մարմնավորելիս: Սակայն Բալիկի թատրոնի ինքնատիպությունը, Օլիվեր Սեյլորի խոսքով ասձ, հենց այն էր, որ «...անհնար է կրկնել, պատճենել այդ թատրոնը: Նման փորձեր եղել են ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Փարիզում, Ամերիկյում, բայց բոլոր նման փորձերը մատնվել են անհաջողության»<sup>1</sup>:

Այս ամենը վկայությունն էր այն բանի, որ Բալիկն ստեղծել էր մանրապատումների սեփական, անկրկնելի թատրոն և արվեստում սկիզբ էր դրել նոր, յուրօրինակ ուղղության:

1922-ի ապրիլին Բալիկի խումբը համերգ տվեց ի նպաստ ոռու կարիքավոր դերասանների՝

---

<sup>1</sup> „Balfeff's chauve-souris of Moscow“ հանդես, 1923, № 7:

Մորիս Հետի մասնակցությամբ։ Մի քանի ամսվա ընթացքում Բալին այնպիսի սեր ու հարգանք էր նվաճել, որ ամերիկացի նշանավոր շատ դերասաններ այդ Աերկայացմանը մասնակցելու և նրան օգնելու համաձայնություն տվին. Օլ. Չոնստանը իր վրա վերցրեց Բարապանի, Էդ Ռինը՝ հոկիչի պարտականությունները, Լիլիան և Դորութի Գիշ քույրերը ծրագրեր էին վաճառում, Լ. Թեյլորը փոխարինում էր գանձապահին, Լեոն Էրուը մատուցողի դեր էր ստանձնել, մի խոսքով, ամերիկյան բեմի աստղերն արեցին ամեն ինչ, որ ստացվեր գեղեցիկ, հետաքրքիր, մեծ հասուլք ունեցող Աերկայացում։

Նույն թվականի սեպտեմբերին Բալինը դարձել էր այն աստիճանի հոչակավոր ու հանրաճանաչ, որ նրան առաջարկեցին բացօթյա մեծ Աերկայացում տալ Սատուհեմպտոնի Արվեստի թանգարանի զբոսայգում, ի նպաստ Ռոշերսի մեմորիալ գրադարանի։ Այստեղ հավաքվեց ամերիկյան հասարակության ամբողջ ընտրանին։ «Զջիկի» ելույթն ամերիկացիները որակեցին իբրև «տարվա ամենանշանակալի իրադարձություն»։ «Կատակերգական էքսպումներ, ոչ մեծ պիեսներ, ավելի շատ՝ շարժում, քան խոսք,—

արվեստն իր ամենապարզ արտահայտություններով,— ահա իսկական արտիստական Ռուսաստանը»,— գրեց «Balieff's chauve-souris of Moscow» հանդեսի թատերախոսը այդ երեկոյին նվիրված հոդվածում:

1923-ին Նյու Յորքում հրատարակվեց Բալիկին և «Չղջիկին» նվիրված հատուկ հանդես<sup>1</sup>: Մորիս Հեստի հանձնարարությամբ, Բալիկին և նրա թատրոնի մասին ծավալուն հոդված գրեց Օլիվեր Սեյլորը: Ռուսաստանի թատերական արվեստը նորություն չէր Սեյլորի համար: 1917-ի փետրվարյան հեղափոխության օրերին նա եղել էր Ռուսաստանում, հաճախել թատրոն, թանգարաններ: Եվ այն ժամանակ, երբ Ամերիկան հերցուրանքներ էր տարածում Ռուսաստանի մասին, նա քաղաքացիական համարձակություն ունեցավ տեսնելու, գնահատելու ռուսական ճշմարիտ արվեստը և այդ մասին հայտարարելու իւրի ամենքի, գրքեր գրելու՝ նվիրված Ռուսաստորոտ:

---

<sup>1</sup> „Balieff's chauve-souris of Moscow“, 1923, Նյու-Յորք:

տանի արվեստին և Գեղարվեստական թատրոնին<sup>1</sup>:

Իսկ Բալինի խմբի այցելության առիթով Սեյլը գրեց այդ ծավալուն հոդվածը. այսուեղ նա համառոտակի անդրադառնում է իր՝ Բալինի կենսագրությանը, «Չղջիկի» ստեղծման պատմությանը, ապա հանգամանորեն բացատրում, թե ինչով էր պայմանավորված այդ թատրոնի բացադրի հաջողությունն ու ճանաչումը Ֆրանսիայում, Անգլիայում, Հոլանդիայում, Ամերիկայում: Թատրոնի վարպետությունը և ուրուս արվեստը գնահատելիս Սեյլը հենվում է թատերական ականավոր քննադատների ու տեսաբանների ասուլյների և թատերախոսականների վրա: Բալինին Ամերիկայում համեմատում էին համաշխարհային հընչակ վայելող ծաղրածուներ Զ. Գրիմալդիի, Գրոկի, Էդ. Չոնսոնի հետ:

Բալինս ինքն էլ չէր պատկերացնում, թե իր թատրոնն ինչպես կընդունի ամերիկացի հանդիսատեսը: Ամերիկայից ստացած իր առաջին տը-

---

<sup>1</sup> Oliver Saylor, The Russian Theatre, Նյու Յորք, 1922, Oliver Saylor, Inside the Moscow Art Theatre, Նյու Յորք, 1925.

պավորությունների մասին նա գրում է Էֆրոսին.  
«Ահա և նյու Յորքը... Ամեն ինչ՝ ահավոր չա-  
փերի... Կյանքն ընթանում է մի տեսակ կատա-  
ղի տեսմապով, կինեմատոգրաֆի ժապավենի նը-  
ման... Ամեն փողոցում թատրոն կա: Սինեմա-  
տոգրաֆ՝ անթիվ-անհամար... Եվ ահա ամեն ինչ  
տեսած ու ապրած այս քաղաքում մենք առա-  
պելական հաջողություն ունենք և այն էլ՝ ոչ թե  
մի բոր տարագիրների... այլ զանգվածների, ա-  
մերիկյան հասարակության շրջանում, Բրոդվեյի  
ամենափառավոր թատրոններից մեկում, և մեր  
ներկայացումների տոմսերը սպառված են արդեն  
հինգ շաբաթ առաջ»<sup>1</sup>:

1923-ի մայիսի 5-ին «Զդշիկը», միացնելով  
չորս ծրագրերի լավագույն համարները, տվեց իր  
հրաժեշտի (ամերիկյան 551-րդ) ներկայացումը  
և մայիսի վերջին մեկնեց Ֆրանսիա: Փարիզն  
ուրախությամբ ընդունեց Բալիսին: Ֆրանսիա-  
կան թերթերը գրեցին, թե իրենք չեն կարող ան-  
կողմնակալ ու անտարբեր վերաբերվել «Զդշ-  
կի» վերադարձին, քանի որ թատրոնը «կազմա-  
կերպվել է մեր աչքի առաջ, սույ բեկորներից»:

<sup>1</sup>ՄԽԱՏ-ի թանգարան, Ն. Ֆ. Բալիսի ֆոնդ:

մի Նիկիտա Բալին ու մի քանի պիես ու նոտա»:  
Երկու և կես տարի էր անցել «Զղջիկ» թատրոնի  
վերածննդից: Ծոնդալի հաջողության հասնելու<sup>5</sup>  
Անգլիայի, Իսպանիայի, Ամերիկայի քաղաքնե-  
րում, խումբը վերադարձել էր այն քաղաքը, որ  
առաջինն էր նրա համար փառք ու անոն ստեղ-  
ծել, սատարել նրան՝ կազմակորվելիս: Ուստի և  
Փարիզն այդ թատրոնն ընդունեց այնպես գրկա-  
բաց ու ջերմ, ինչպես կընդուներ հարազատ զա-  
վակին: Փարիզցիները տոնական տրամադրու-  
թյամբ շտապում էին «Ֆեմինա» թատրոն, ասեա  
բերկրալի հանդիպման էին գնում «անասինան  
մոտ ու սիրելի» ինչ որ մեկի հետ,— գրում էին  
թերթերը:

Փարիզի հանդիսատեսը չափազանց ուրախէ  
էր «Զղջիկ» վերադարձի համար և ծափահա-  
րում էր ինքնամոռաց: Ու թեև, ինչպես Ստանիս-  
լավսկին է գրում, «Փարիզը չի սիրում կրկնել իր  
տպակորությունները»<sup>1</sup>, այնուհանդերձ քավական  
էր՝ Բալինը հայտնվեր քեմում, որպեսզի հանդի-  
սատեսներն սկսեին ծափահարել ու քրքչալ, ան-  
կախ այն քանից, թե ինչ էր ասում նա և ինչպես

<sup>1</sup> К. С. Станиславский, ч. 6, л 146.

Էր ասում. նրանք պարզապես որպահանում էին՝ տեսնելով այն մարդուն, որին «արդեն ճանաչելու սիրել էին դեռ երկու տարի առաջ»<sup>1</sup>:

1923-ի մայիսի 24-ին «Ֆեմինա» թատրոնում կայացավ «Չղջիկի» առաջին համերգը: Դամինում բազմաթիվ ամերիկացիներ կային, որոնք խանդավառությամբ ընդունեցին Բալիկն՝ այն համոզմամբ, որ հենց իրենք են հայտնագործել նրան:

Ամսովա ամիսները մեծ բիզնեսի ամիսներ դարձան, թատրոնը վիթխարի հասուլթ ունեցավ: Մամովը գրեց, թե ֆրանսիական թատրոնի պատմության մեջ առաջին անգամ է, որ օտարերկրյա ներկայացումներն ամսովա ամիսնաշոգ ամիսներին այդպիսի հսկայական հաջողություն են ունենում և այդքան մեծաթիվ հանդիսատեսներ հավաքում:

Թերթերը գրեցին, թե Բալիկը վերադարձել է Փարիզ, որպեսզի «ստուգի հանդիսատեսների համակրությունը», թե «Ֆեմինան» լեփ-լեցուն է, և հանդիսատեսները ծափահարում են անվերջ:

Փարիզան ծրագրի մեջ Բալիկը ներմուծեց

<sup>1</sup> «Последние новости» թիրթ, 1923, № 947:

ամերիկյան երգեր, «Տոկիոն պարում է» խորեոգրաֆիկ պատկերը, Չեխովի «Զիու ազգանունը» պատմվածքի բեմականացումը:

«Չղջիկի» Աերկայացումները բարձր գնահատեց այդ ժամանակ Փարիզում գտնվող Կ. Բայլմոնտը: Նա Բալինին համարեց «Ծշմարիտ արվեստագետ», «իր գործի իսկական վարպետ»: «Դուք ամենափոքրիկ բանից արվեստի գործ նք ստեղծում, — գրեց նա Բալինին, — և այն դադարում է փոքր լինելուց, դառնում է նրբագեղ-կենդանի, կերպարանափոխված... Սիրելով բանաստեղծական խոսքի անբասիր վիրտուոզությունը, ինչպես կարող եմ չսիրել Չեր բեմադրությունների ոգեշունչ վիրտուոզությունը ևս»<sup>1</sup>: «Չղջիկի» յուրաքանչյուր համարը նրա առջև բացահայտում էր ուսական հոգու տարրեր կողմերը՝ «ուրախ, տխուր, բերկրալի»...

Բալինի բեմադրությունների առնչությամբ նա հիշում է իր այն բանաստեղծությունը, որ աննըշան, չնչին փաստից լուրջ ու հետաքրքիր պատկեր ստեղծելու կարողությունն է դրվագում.

<sup>1</sup> Ա. Բախրուշինի անվան թանգարան, Ե. Բալինի ֆոնդ:

**Գիտցիր արարել փշուրից անգամ,  
Այլապես ել ի՞նչ հրաշագործ ես դու...**

1926-ի մարտին Փարիզի «Մադեն» թատրոնի շենքում վերսկավեցին «Զոջիկի» ներկայացումները։ Ներկայացման խորային տարրն այս անգամ մղվեց երկրորդ պլան, ավելի մեծ տեղ սկսեց գրավել մնաշախաղը։ Թատրոնն այդ քայլին դիմեց՝ հարմարվելով օտար միջավայրին։ քանի որ մնաշախաղն ավելի մատչելի ու հասկանալի էր այլալեզու հանդիսատեսին։ Այժմ շատ բան կախված էր նկարչից, հարկավոր էին արտահայտիչ դեկորներ, զգեստներ, մեծ տեղ էր հատկացվում լուսին, գույներին, տոների և հրնաշունների խաղին։ Այս ժանրում առաջին փորձը եղավ Սնդերսնի «Խոզարածը» ներիաթը։ Լուսային էֆեկտներն ու թագավորի և խոզարածի վառ զգեստները օրգանապես ներդաշնակում էին երկի սատիրական ընթացքին ու հերիաթային բնույթին։ Մեծ հնարամտություն ու երևակայություն էր ի հայտ բերել նկարիչ Մ. Դոբուժինսկին։

Ուրախ ու գունագեղ էին «Ռուս կազակները Փարիզում», «Ռուսական հարսանիք» ներկայացումները՝ ոպսական կյանքի ու կենցաղի ռեալ

պատկերներով: Թերթերը գրեցին նաև «Տրավիատայի» բեմադրության (Վերդիի մոտիվներով) արտասովոր բնույթի մասին. «Զվարճալի բուժոնադր, Դոքուժինակու դեկորների և զգեստների շնորհիվ, արտակարգ, գրեթե սահմոկելի սրություն ու ծանրակշիռ արժեք է ձեռք բերել»:

Ֆրանչական թերթի թատերախոսը գրեց «Զովելկա» մանրապատում-մնջախաղի մեծ հաջողության մասին, որ ձևավորել էր 1926-ին Փարիզում գտնվող Մարտիրոս Սարյանը: Բալիսի բեմադրությունների ձևավորմանը մասնակցում էին այնպիսի նշանավոր նկարիչներ, ինչպես՝ Ալ. և Ն. Բենուաները, Մ. Դոքուժինակին, Ս. Սուդելիկինը: Եվ երբ Բալիսը Սարյանին առաջարկեց ձևավորել այդ ոչ մեծ մնջախաղը, Սարյանը սիրով համաձայնվեց: Սարյանի թանգարանում պահպանվում է ձևավորման գուաշով արված էսքիզը<sup>1</sup>:

«Չղջիկ» թատրոնի տարբերիչ հատկանիշն էր ոչ միայն բեմական միջոցների ու լուսային էֆեկտների տեխնիկական գերազանց օգտագործումը, այլև սերտ կապի, միասնորթյան ստեղծու-

---

<sup>1</sup>Տե՛ս Լ. Խալարյան, Սարյանը և թատրոնը, Երևան, 1960:

մը դերասանների և հանդիսարանի միջև: Թատրոնում անխզելիորեն հարկանում էին երեք բաղադրիչներ՝ ամբողջ խումբը, լսարանը և ինք Բալիկը, որն ուղղություն էր տալիս ողջ ներկայացմանը և բարձր կետի վրա պահում հոգական լարումը:

Փարիզում հյուրախաղերն ավարտելուց հետո Բալիկը թատերախմբով մեկնեց Անգլիա, ապա և Շոտլանդիա: Վերջին ուղևորության մասին հիշում է այդ շրջանում թատերախմբի գեղարվեստական մասը վարող Վ. Շվերուբովիչը՝ Վ. Կաչալովի որդին: Բալիկը զարմանալի նրբությամբ էր զգում հասարակության տրամադրությունը: Գլագոլոյում նա որոշում է քեմ ելնել շոտլանդական ազգային զգեստով: Շվերուբովիչը, իմանալով, թե շոտլանդացիներն ինչ խանդով ու երկյուղածությամբ են վերաբերվում իրենց բարքերին ու սովորույթներին, փորձում է նրան եռ պահել այդ քայլից: Սակայն զգեստու արդեն գնված էր, և ահա քեմում հայտնվում է Բալիկը՝ բարեհոգի ժպիտը լուսնի նման կլոր ունքին, վանդակավոր յուքկայով և վրայից հագած ֆրակով: Դահլիճում քրքիչ է բարձրանում, և հասարակությունը ոչ միայն չի սովում Բալիկին, այլև

ընդունում է ցնծագին ծափերով: Հաջորդ ներկայացումներին արդեն անհնար էր տուն ճարել...

Ծոտլանդացիները գնահատեցին «Չղջիկի» արվեստը և սիրեցին Բալինի հումորը: Ստանիպավսկուն գրած իր մի նամակում Բալինը հաղորդում է այստեղից ստացած իր տպավորությունները. «Հիմա մենք Գլազգոյում ենք: Ծոտլանդական վիթխարի քաղաք՝ թատրոնը պաշտող հասարակությամբ: Մեր ներկայացումներն անցնում են լրիվ մուտքով: Բացառիկ հասարակություն է, սկզբում՝ փոքր-ինչ խիստ, բայց հետզհետե ենթարկվում է, և դուք նրա հետ կարող եք վարվել ձեր ցանկացածի պես»<sup>1</sup>:

Ծոտլանդիայից «Չղջիկը» նորից գնաց Փարիզ. հիմա այստեղ էր գալիս միայն հյուրախաղերի կամ նշելու իր թատրոնի՝ Փարիզի հետ կապված հիշարժան տարեթյերը:

1930-ին Փարիզի թատերական հասարակայնությունը նշեց արտասահմանում «Չղջիկի» վերածննդի տասնամյա հոբելյանը: Նույն թվականի դեկտեմբերի 22-ին Բալինն ու նրա խումբը «Ֆեմինա» թատրոնի շենքում հանդես եկան թար-

<sup>1</sup> ՄԽԱՏ-ի թանգարան, Կ. Ստանիպավսկու արխիվ:

մացված ծրագրով: «Ես միշտ ցանկացել եմ ցույց տալ ոռու գրականության լավագույն նմուշները», — ասել է Բալինն իր ծրագրի մասին թերթերից մեկի թղթակցին: Նոր բեմադրությունը Չեխովի «Ռոման՝ կոնտրաբասով» պատմվածքի բեմականացումն էր: Բալինը վաղուց էր ցանկանում դիմել այս պատմվածքին, դեռ Մուկվայում: Բայց քանի որ «Ռոմանի» հիման վրա օպերետ կար, Բալինը չէր համարձակվում բեմադրել, մինչև որ նրան վճռական քայլի մղեց Կահպակեր-Չեխովայի քաջալերանը: Պատմվածքի ողբերգական ֆինալը նա փոխարինեց ուրախ ավարտով, երաժիշտ Սմիշկովի խելագարության: Առաջարանը ցուցադրելու փոխարեն նրան ամուսնացնում էին պատմվածքի հերոսուհու հետ:

«Չղջիկի» ստեղծման քսանամյակը ևս Բալինը նշեց Փարիզում, «Մադեն» թատրոնում, վերականգնելով իր նախկին ծրագիրը՝ «Կատենկան», Չեխովի «Վիրահատումը», «Սեր առ պաշտոնները» փոքրիկ պատկերը, ոուսական երգերը:

Բալինը սիրում էր Փարիզը, սակայն այստեղ սեփական թատրոն կառուցելու և մեկը նդմիշտ հաստատելու նրա փորձերը դատապարտված էին ձախողման: 1928-ի բորսային համընդհա-

նուր ճգնաժամը խանգարեց Բալիկին, և վիթ-խարի գումար կորցրեց և ստիպված եղավ վերադառնալ Ամերիկա:

Այստեղ «Զղջիկն» ընդունվեց խանդավառությամբ: Ամերիկայի թատրոնների վրա այս փոքրիկ խմբի ազդեցությունն այնպէս ակնառու էր, որ թերթերն անկարող էին չխոստովանել: Հետագայում դրանցից շատերն իրենց հոդվածներում ընդգծեցին այն պարագան, որ Գեղարվեստական թատրոնի հաղթարշավը զգալիորեն նախապատրաստված էր «Զղջիկի» հաջողությամբ, քանի որ ամերիկացիներն այս խմբի միջոցով առաջին անգամ հնարավորություն ստացան համոզվելու ուսական թատերարվեստի գերազանցության մեջ:

Բալիկն այն մարդկանցից մեկն էր, որոնց նախաձեռնությամբ Գեղարվեստական թատրոնը հյուրախաղերի հրավիրվեց Ամերիկա: Այդ մասին իր հուշերում գրել է Կ. Ստանիսլավսկին:

Գեղարվեստական թատրոնի ամերիկյան հյուրախաղերի կազմակերպիչը Մորիս Հեստն էր, որին եռանդուն օժանդակություն էր ցուց տալիս Բալիկը: 1922-ի մայիսի 17-ին գրեց Ստանիսլավսկուն. «Հեստը շատ օրինավոր մարդ է,

խենթանալու աստիճան սիրում է Ռուսաստանը և Զեզ այստեղ կանչել-բերելը նա պարձանք ու պատիվ է համարում իր համար... Ու թեև ոուսական թատրոնի ներկայությունը Նյու Յորքում մեծ ռիսկի հետ կապված գործ է, այնուհանդերձ Հեստն այդ բանը վերցնում է իր վրա»<sup>1</sup>:

Բաղին արդեն լավ գիտեր ամերիկացի հանդիսատեսի ճաշակն ու պահանջմունքները և Ստանիլավսկուն ուղղված համակում գրում էր, թե ընկալման իմաստով թատրոնի խաղացանկից ի՞նչը ավելի հարմար կարող է լինել հեռավոր այս ժողովրդին ներկայացնելու համար: Խորհուրդ էր տալիս բերել «Երեք քույր», «Բալենու այգին»՝ անպայման Ռուսաստանին բնորոշ զգեստներով:

Դեռ Գեղարվեստական թատրոնի ժամանումից շատ ու շատ առաջ Մորիս Հեստը լավագույն թատերագետներին հոդվածներ պատվիրեց, պատրաստվեցին ելույթներ ուղիղով, հրատարակվեց հատուկ գրքով՝ Գեղարվեստական թատրոնի մանրամասն խաղացանկով, մի խոս-

<sup>1</sup> ՄհԱ.Տ-ի թանգարան, Կ. Ստանիլավսկու արխիվ,

քով, արվեց ամեն ինչ, որ ամերիկյան հասարակությունը պատրաստ լիներ ուս բևմարվեստի պատգամավորին ընդունելու:

1922-ի սեպտեմբերի 8-ին Ստանիլավսկին և Նեմիրովիչ-Դանչենկոն հեռագիր ստացան Բալիսից. «Զեր գալատյան օրը նա (Հետոր— Ի. Ս.) ուրքի կուանի ամբողջ քաղաքը: Ռադիոն կհաղորդի Զեր ժամանման բոլոր օրերի մասին: Նա մի թատերագետի պատվիրել է մի ամբողջ գիրք գրել Գեղարվեստական թատրոնի մասին, որ լույս կտեսնի Զեր այցելությանը...»<sup>1</sup>:

1923-ի հունվարի 4-ին Գեղարվեստական թատրոնը ժամանեց Նյու Յորք, և նույն օրվա երեկոյան էլ «Դարի թատրոնի» («Century theatre») շենքում «Չղջիկը» տվեց իր 400-րդ ներկայացումը՝ ի պատիվ Գեղարվեստական թատրոնի: Այդ երեկոյի մասին Ստանիլավսկին նիշում է. Բալիսը «...հասարակության սիրելին է՝ իր հին, չխամրող էքսպրուսիզով, որ նորից ու նորից թարմացվում են նոր, անսպասելի սրախոսություններով... ծրագիրը լավն է, գեղարվեստա-

<sup>1</sup> ՄԽԱՏ-ի թանգարան, Կ. Ստանիլավսկու արխիվ, № 7151. Խոսքը Մելորի “The Russian theatre” գրքի մասին է:

կան մեծ ճաշակով արված»<sup>1</sup>: Նույն երեկոյի մասին Օլիվեր Սելլորը գրեց. «Այդ Աերկայացման ոչ մի հանդիատես չի կարող մոռանալ Գեղարվեստական թատրոնի Աերկայացուցիչների հանդիսավոր երթը... իր՝ նախապեսի գլխավորությամբ»<sup>2</sup>:

Գեղարվեստական թատրոնի գաստրոլային առաջին խոկ Աերկայացումը՝ «Յար Ֆյոդորը» (1923 թ. հունվարի 8) անցավ մեծ հաջողությամբ: Դրան նպաստեց և այն, որ հանդիատեսի ձեռքին էր պիեսի թարգմանությունը, որի մասին նախապես հոգացել էին Բալիևն ու Հեստր:

Ապրիլին Գեղարվեստական թատրոնը հյուրախաղերի մեկնեց Զիկագո: Բալիևը հետևում էր հարազատ թատրոնի հաջողությանը: «Յանկանում եմ Զեզ գեղարվեստական վիթխարի հաջողություն Զիկագոյում», — հեռագրեց նա ամբողջ թատերախմբին և առանձին՝ Ստանիսլավսկուն. «Համբուրում եմ Զեզ և ի դեմս Զեզ՝ ամբողջ ՄԽՏ-ին»<sup>3</sup>:

<sup>1</sup> Կ. Ստանիսլավսկի, հ. 6, էջ 192:

<sup>2</sup> Օ. Սելլորի „Inside the Moscow Art Theatre“ գրքում:

<sup>3</sup> ՄԽՏ-ի թանգարան, ն. 3. Բալիևի արխիվ:

Որտեղ էլ հանդես գար Գեղարվեստական թատրոնը՝ Փարիզում թե մի այլ քաղաքում, Բալիսն ամբողջ սրտով նրա հետ էր: «Զեզ հյուրախաղերի բացման օրը ցանկանում եմ, որ Գեղարվեստական թատրոնի անունը շարունակի միշտ գեղարվեստական նվաճումների հոմանիշ լինել»,— գրեց նա Փարիզ: Եվ ապա՝ «Սրտանց շնորհավորում եմ Փարիզում ոռոսական արվեստի հաղթանակի համար»:

Կապը Գեղարվեստական թատրոնի հետ չընդհանուր նաև այն տարիներին, երբ թատրոնը վերաբարձավ Մուսկվա: 1926-ի սեպտեմբերին Ստանիսլավսկին, Բալիսից ստանալով Ամերիկայում լույս տեսած իր «Խմ կյանքը արվեստում» գիրքը, գրեց նրան. «Լսեցի Զեր անփոփոխ հաջողության մասին արտասահմանում: Շատ ուրախ եմ այդ բանի համար և ամբողջ սրտով հիտագա հաջողություններ եմ ցանկանում»:

Եթե «Զջիկն» ազդեցություն ունեցավ ամերիկյան կատակերգական ժանրի թատրոնների վրա, ապա Գեղարվեստական թատրոնի հյուրախաղերը վիթխարի դեր խաղացին ամերիկյան թատրոնի զարգացման մեջ ընդհանրապես: Ամերիկայի առաջատար և առաջավոր թատրոնը

Աշանավոր «Գիլդը», օրինակ, սկսեց հետևել Գեղարվեստական թատրոնի խաղացանկին՝ հետամուտ ռեալիզմի հաստատմանը բեմում: Ստանիչավոկու սիստեմի հետևորդ դարձավ 1931-ին հիմնադրված «Գրուպ» թատրոնը, որը իրականացվում էին դերասանական ճշմարիտ անամքի ստեղծելու սկզբունքները:

Գեղարվեստական թատրոնի մեկնումից հետո Բալիսը շարունակեց իր ելույթները Ամերիկայով մեկ: Այժմ նրա թատրոնում ավելի ու ավելի մեծ տեղ էր հատկացվում մնջախաղին: «The New York Times» թերթը գրեց՝ Ռուսատանից «մեզ մոտ է եկել զարմանալի և փայլուն ներկայացում»:

Բալիսի հարուստ մնջախաղի, շարժունության և ճկունության մասին գրեցին բոլոր թերթերը: Նա «միշտ էլ կարողանում էր լինել ուշադրության կենտրոնում»: Ահա թե ինչ են պատմում «Չղջիկի» համարներից մեկի մասին: Բեմ էր ելնում գեղեցիկ երգչունին և հանրածանոթ ոռմանս կատարում: Կողքից աննկատելիորեն հայտնվում էր նաև Բալիսը, որը երգի ընթացքում շարժումներով մեկնարանում էր ոռմանսի բովանդակությունը: Հասարակությունը, երգչու-

1705

АннаСен. 12.

13

1915



**«Легкие Шансы»**  
**Для спорта и охоты.**


Брест, Красный пр., 2 и 10.  
Брест, ул. Симонова 12 и 14.  
Телефон 1-10-10.

1915 г. Брест. Акция 1915 г.

Уважаемые братья и сестры! Всем известно, что спортивные и охотничьи товары в Бресте продавались в магазине Макса Гольдмана. Имя Гольдмана и его жены Марии Гольдман вспоминается всеми. Это было время, когда в Бресте было много спортивных и охотничьих магазинов. Но Гольдманы были самые известные. Их магазин был открыт в 1915 году и действует до сих пор. Адрес магазина: улица Гоголя, дом 15-16-20. Часы работы: с 10:00 до 18:00. Пожалуйста, приходите к нам в магазин!

Анна Сен. 12. 1915

г. Брест. 1915





1922

հուն լսելու փոխարեն, ամբողջովին կլանվում էր Բալիկի մնջախաղով և ծափահարում ճրան:

Սակայն առանց տաղանդավոր դերասանների, հասկանալի է, Բալիկը չէր կարող հասնել ոչ մի ծանրակշիռ արդյունքի: Գնահատելով թատերախմբի յուրաքանչյուր դերասանին, քննադատ Արթուր Պոլակը «The Brooklin Daily Eagle»-ում գրեց, թե «Զդիկը» ամբողջ խմբի տաղանդի, ճաշակի և վարպետության հաջող զոգակցություն է, «ոուսական թատերական բարձր արվեստի վառ արտահայտությունը»: Առանձնապես ընդգծում էին խմբի դերասանների մի հատկանիշը՝ վերամարտնավորվելու արտակարգ ձիրքը, հիացմունքով էին խոսում Դեյկարխանովայի տաղանդի, պարզության, նրբագեղության մասին, այն մասին, թե ինչ վարպետությամբ է նա կարողանում դառնալ և՛ դեռասի աղջիկ, և՛ խարխուլ պառավ: «Զդիկը» կույր կլիներ՝ առանց նրա», — գրեց Օլիվեր Սեյլորը:

Այն ամենը, ինչ մատուցվում էր «Զդիկ» թատրոնի բեմահարթակից, հետաքրքիր էր, պարզ ու մատչելի, թեև բնորոշ էր միայն և միայն ոուսական կյանքին: «Christian Science Monitor» թերթը գրեց. Բալիկի թատերախմբի արվեստն այնալ:

բան մատչելի է, ողջախտի ու մաքուր, որ այս Աերկայացումներին կարելի է տանել «հարազատ դեռահաս դատերը կամ բարեպաշտ մորաքրոջը», ինչպես նաև «եպիսկոպոս աներորդուն»:

«Our World» թերթի քննախոս Քենետ Անդրյոսը գրեց. «Չնայած ոռուերենի բարդությանը, հումորն ու զվարթ տրամադրությունն իրենց ուղին են հարթում դեպի հանդիսատեսը: Ու թեև դա օտար, «տարօրինակ» արվեստ է, այնուհանդերձ հրապուրում է և համակում ամերիկացիներին»:

«Չղջիկի» խաղացանկը միշտ էլ լի էր անակընկալներով: Իր «Inside the Moscow Art Theatre» գրքում 1925-ին Օլիվերը գրել է, թե ամերիկացի հանդիսատեսի համար, թեմատիկայի և ուժիսուրայի տեսակետից, իրադարձություն եղավ Գորկու իտալական նեքիաթներից մեկի («Մայրը») բեմադրությունը: Երկի հիմքում լեգենդ է Թամերլանի մոտ գերի ընկած տղայի ու նրա մոր մասին, որ դաժան բռնակալի բանակատեղին է գալիս՝ որդուն ազատելու խնդրանքով: «Դու միայն մարդ ես,— ասում է նա Թամերլանին,— իսկ ես՝ Մայր: Դու ծառայում ես մահվան, ես՝ կյանքին... Մենք՝ մայրերս ուժեղ

ենք մահվանից, մենք, որ անվերջ աշխարհին և կիրում ենք իմաստուններ, բանաստեղծներ, հերոսներ, մենք, որ նրանց մեջ սերմանում ենք այն ամենը, ինչով հոչակվում են նրանք»:

Մոր աներեր խիզախությունից փափկում է բռնակալի կարծր սիրտը: Նա երեք հարյուր հեծյալ է ուղարկում երկրի տարբեր կողմերը՝ տղային գտնելու: «Այս կինը կսպասի այստեղ, և ես էլ կսպասեմ նրա հետ», — ասում է տիրակալը: «Ռեժիսուրայի չենթարկվող» այս տեսարանը փայլուն էր բեմադրել Բալինը: Այն տեղադրված էր երկու խմբերգի միջև: Նախերգից հետո սկազեստ երգիչները հեռանում էին՝ գնալով աջ ու ձախ, լրման հասցնելով այս հոգիչ պիեսի գործողության արտահայտչությունը:

«Չղջիկի» ներկայացումների մշտական հաջողությունը բացարում էին խաղացանկի բազմազանությամբ ու հարստությամբ («The New York Globe»): «Մի խոսքով, — գրեց «The Evening Journal» հանդեսը, — Նյու Յորքի առևած է գրոհով»: «Ոչ մի նման բան չկա մեր բեմերում», — գրեց Ռոբերտ Գ. Ուելը «The Evening Telegraph»-ում:

Նրանք, ում բախտ էր վիճակվել մի անգամ

լինել «Զղջիկի» որևէ ներկայացմանը, նորից ու նորից ձգտում էին այնտեղ: «Դա պարզապես հրաշք էր», — հիշում է Սերգեյ Ռախմանինովը, որ միշտ լինում էր «Զղջիկի» ներկայացումներին: Իսկ Ֆյոդոր Շալյափինն առանձնապես գնահատում էր այն, որ Բալինի թատրոնը նոր էր ու կատարյալ: Այդ տարիներին Ամերիկայում գտնըվող Յաշա Հեյֆեցը գրել է, թե մի քանի անգամ է տեսել Բալինի յուրաքանչյուր ներկայացումը և «ըմբողիսնել նրա ամեն մի ակնթարթը»: «Ես հիացած եմ այդ թատրոնով», — գրել է Լեոպոլդ Ստոկովսկին, որն առաջին անգամ «Զղջիկի» ներկայացումները դիտել է Փարիզում, ապա և Նյու Յորքում:

«Զղջիկի» ներկայացումներն սկսվում էին հետեւ վարագույրից: Վիթխարի վարագույրի վրա պատկերված էր դահլիճ, որ նատած էին երրուստե «Զղջիկի» ներկայացումներին եղած նշանակոր դերասաններ, երգիչներ, երաժիշտներ, քաղաքական գործիչներ՝ Թեոդոր Ռուզվելտը, Ֆյոդոր Շալյափինը, Չարլզ Չապլինը, Սերգեյ Ռախմանինովը, Ամենա Պավլովան, Մորիս Հեստը, Յաշա Հեյֆեցը, Օլ Ջոնսոնը և ուրիշներ: Զախ անկյունում հասակով մեկ պատկերված էր Բալինը:

Երեսնական թվականներին կինոն ավելի ու ավելի մեծ տեղ էր գրավում արվեստում: Հարցազրույցներից մեկում Բալինն ասել է, թե թատրոնն այլս չի կարող մրցել հնչուն կինոյի հետ: Բոլորը ձգտում են Հոլիվուդ՝ ընկած շահույթի ետևից:

1928-ի հունվարին Բալինը պայմանագիր կնքեց «Պարամուն» ընկերության հետ, որը պետք է հնչուն ֆիլմ նկարահաներ «Չղջիկ» ներկայացումների հիման վրա: Թատրոններն սկսեցին ավելի ու ավելի քիչ ներկայացումներ տալ: Հենց միայն 1929-ին Բրոդվեյում փակվեց 12 թատրոն: Մի շարք առաջադեմ թատրոններ, այդ թվում «Գիլդ», մեծ դժվարությունների բախվեցին. լուրջ բեմադրությունները վիթխարի ծախսեր էին պահանջում: Ֆինանսական ճգնաժամի ճնշման տակ նույնիսկ համաշխարհային ու եվրոպական դասական գործեր բեմադրող «Գիլդ» թատրոնն ատիպված էր փոխգիշման դիմել՝ դառնալով տիպիկ «առևտրական» թատրոն: Փոխվեց խաղացանկի ողղովայունը, երևան եկան դասականի մոդայական նմանակումներ, որ հասնում էին թեթև, օպավեշտական մլուգիքների:

Ավարտելով հյուրախաղերը Կանադայում,

1932-ի հոկտեմբերին Բալիսն իր խմբով գնաց Բրյուսել, ապա Ամստերդամ, Հաագա և, վերջապես, Անգլիա: Անգլիացիները, որոնց հիշողության մեջ դեռ թարմ էին Բալիսի ճախկին ելույթները, չերմ ընդունելություն կազմակերպեցին, որին ներկա էին թագավորն ու թագուհին: Հյուրախաղերի ժամանակ, բացի ոռուական խաղացանկից, ներկայացվեց նաև «Պիկովայա դաման» անգլերեն: Լոնդոնից Բալիսը գրեց Մուկվայում գտնվող Կ. Ստանիսլավսկուն. «Մենք մոտ հինգ ամիս մեծ հաջողությամբ ելույթներ ունեցանք Լոնդոնում: Անգլիական հասարակությունը սքանչելիորեն բարեկիրթ է, և այժմ Անգլիայում խելանեղորեն մոդայական է Չեխովը: Տարբեր բեմերում ներկայացվում են «Քերի Վանյան», «Ծայր», «Երեք քույրերը»:

Վերադառնալով Ամերիկա, Բալիսը Նյու Յորքում թատրոն կազմակերպեց «Նոր Չղջիկ» անվամբ, փորձելով խաղացանկ ընտրել նոր հանդիսատեսի ճաշակով: Նախկին դերասաններից ոնանք հեռացան, խումբը համալրվեց բալետի մենակատարներով, և թատրոնը հետզհետեւ կորցրեց իր անկրկնելի յուրօրինակությունը:

Իսկ մեկ տարի անց Բալիսը ելույթներ էր վա-

րում Նյու Յորքի «Կոնտինենտալ-Վարիետեում», որ գնչուական երգերի կատարումը հանդես էր գալիս Շալյապինի դուստրը՝ Լիդիա Շալյապինան:

Որոշ թատրոններ ձգտում էին ընդօրինակել Բալիկին: Ստեղծվեց թատրոն՝ «Մանկական Չըջիկ» անունով, որ իր խաղացանի մեջ առայ հանրահայտ «Կատենկան», «Զինվորիկների զորահանդեսը» և այլն: Ամերիկացիները նույնիսկ փորձեցին պահպանել ոուսական կոլորիտը: Ելույթավար Նոել Թոմին աշխատում էր նմանվել Բալիկին: Բայց այս թատրոնն էլ երկար չփակացավ:

1935-ի հունիսին Նյու Յորքում բացվեց նոր «Չըջիկը» բացառապես ամերիկացի դերասաններով, որ ծրագիրը վարում էին անգլերեն: Ըստ երևոյթին, այս խումբը հաջողություն չի ունեցել: Անցավ ևս մեկ տարի, և ահա թերթերում հայտարարություն եղավ, թե Բալիկը դերասանների մի ոչ մեծ խմբով շարունակում է աշխատել գիշերային փոքրիկ նկուղ-կաբարեում:

Բալիկը կյանքի վերջին տարին անցկացրեց Զիկագոյում: Նրա թատրոնն այլևս գոյություն չուներ, և ինքը սնամեկացել էր: Մեռավ նա Զի-

Կագոյի հյուրանոցներից մեկում 1936-ին:

Գնահատելով Բաղիսի արվեստը, ֆրանսիական թերթերը մեծ ափսոսանքով գրեցին, թե «անցյալ դարձավ ոչ միայն ոռու, այլև համաշխարհային թատերա-գեղարվեստական աշխարհի ամենավառ ու գունեղ ֆիգուրներից մեկը», թե նա «մի ամբողջ դարաշրջան էր թատերարվեստի զարգացման պատմության մեջ: Նրա բեմական տեխնիկան ու հնարանքները այնքան մեծ ազդեցություն էին գործել ֆրանսիական թատրոնի վրա, որ Ժեմյեն գրեց. «Ֆրանսիական արվեստի պրոպագանդման համար ոչ ոք այնքան բան չի արել, որքան Բաղիսը»: Ի դեպ, նրա իսկ բարեխոսությամբ էր Բաղիսը պարգևատրվել Պատվոնեգեննի շքանշանով:

Անցնելով Սոտանիստավուկու խառապահանչ դպրոցը և ինքն էլ լինելով կազմակերպչական մեծ ձիրքով օժտված անզիջում ուժիսոր, Բալիսն ստեղծեց մանրապատումների նոր, ինքնատիպ թատրոն, որ դարձավ ոռու թատերարվեստի նշանակալի նվաճումներից մեկը և արտահայտման իր փայլուն ձևերով հաստատուն տեղ գրավեց ոռու և համաշխարհային թատրոնի պատմության մեջ:

30 Եթու.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0057052

A I  
16868

